



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտության իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԿՈՐԻՆՅԱՆ

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ

„ՆՈՐ ԴԻՐՔԵՐԸ“

ZUR MÆSSLICH
U. U. U. U.




Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԵՎՀԱԿԱՑՄԱՆ Հ. 1901 թ.

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ
„ՆՈՐ ԴԻՐՔԵՐԸ“

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1929



Главлит № А 53744

Тираж 2000.

Типография ГИЗ-а Армении. Москва, Армянский пер. 2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1.	Առաջաբան	5
2.	Հայկական ամենովիշականությունը	7
3.	Մնորք թե՞ հին դիրքեր	19
4.	Ռուգեն փաշան արեվիշլյան ժողովորդ-ների բարեկամի դերում	38
5.	Ուշացած խոստովանություններ	61

卷

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ կապիտալի մարտական կաղմակերպությունը մահացու հարված ստացավ նոյնմբերի 29-ին:

Խորհրդային Հայաստանի կառուցումը, բանվորների և գյուղացիների հաղթական առաջամարտը, ժողովրդական լայն զանգվածների անտեսական և կուլտուրական վերելքը և որեցորուժեղացող սոցիալիստական շինարարությունը քայլ առ քայլ քանողում են նացիոնալիզմի ռեալական վողջ պատվանդանը:

Սակայն, պարտված և ջախջախված բուրժուազիան այսոր ել չի ցանկանում հրաժարվել իր հիմնական դիրքերից:

Պատոպարված արտասահմանում—և միացած միջազգային ռեակցիայի ուրիշ զանդվածների հետ, նա նոր զինքեր և կոռում և նոր մեթոդներ մշակում ցրված իր ույժերի ամփոփման և հականեղափոխական նոր արշավանքների կաղմակերպման համար:

Նա աշխատում է «բարեկամներ» և «հետեւրզներ» գանել և Խորհրդային Միության սահմաններում—ոգտագործել մեր սոցիալիստական շինարարության ընթացքում առաջացող բարդություններ, հենվելով զյուղական բուրժուազիայի և քաղաքներում հավաքված նախկին ունենող սոցիալական շերտերի ցրված բեկորների ու նեազմանների վրա, ապա իր կողմը քարշելով մանր-բուրժուազիային, ձգտում և ստեղծել նոր հենակետներ հականելավուական ձեռնարկությունների կաղմակերպման համար:

Յեվ ահա այդ նպատակն ավելի մեծ հաջողությամբ իրագործելու համար շատ անդամ նա հանդես է գալիս քողարկված դեմքով,—«Ժամանակի վոգու» համաձայն «բարեկարգված» ծրագրով և հայտարարություններով։ Այդ աշխատանքի ընթացքում մարտական նացիոնալիզմի հիմնական կաղմակերպությունը ձեռք

և մեկնում նեպյան նորագույն բուրժուազիայի իդեոլոգներին—
«նոր գիրքերի» այսորվա գաղափարախոսներին:

Նա նույնիսկ ոգտագործում և նրանց աշխատանքը և սմե-
նովեխականների տեսական արսենալից վերցրած արգումենտնե-
րով զարդարում և մարտական նացիոնալիզմի դեմքը:

Այս բրոշյուրը նվիրված է շեշտված յերեսույթի քննությանը:
Յես զիտավորությամբ հայկական սմենովեխականության կողքին
դնում եմ զաշնակիզմը: Այնքան ել զժվար չի նկատել, վոր կա-
բավական նշմարելի մի թել, վոր կապում և մարտական նա-
նացիոնալիզմի բացահայտ ներկայացուցիչներին նեղ նացիոնա-
լիզմի նորագույն մուսհատիկների հետ:

Ա. Կ.

ՀԱՅԿԱԿԱՆ «ՍՄԵՆՈՎԵԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

I

Հայկական սմենովեխականությունը սկիզբ է առնում
1921 թվին:

Առաջին սմենովեխականները հանդես են գալիս հայ ռամկավար-աղատական կոչվող կուսակցության շարքերից:

Այդ կուսակցությունը ծագել է, ինչպես հայտնի յե, Թյուրքիայում և ներկայացնում է իրենից արևմտահայ բուրժուազիայի քաղաքական կազմակերպություն: Իր հետեւից քարշ ե տալիս նա բավական լայն մտավորական և մանր-բուրժուական հատվածներ:

Ցեղ ռամկավար-աղատականները միմիայն Թյուրքիայում չեն գործում: Կան ռամկավարներ Յեղիպտոսում, Սիրիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայում: Յուրաքանչյուր յերկրում այդ կուսակցությունը ունի իր առանձին գործելառկերպ, վորը ստեղծվել և անշուշտ տվյալ յերկրի հասարակական-քաղաքական պայմանների համաձայն: Այսպես որինակ՝ Յեղիպտոսի և Անգլիայի ռամկավարները գտնվում են անգլիական իմպերիալիզմի խիստ մեծ ազդեցության ներքո և ըստ այնմ հակած են գեղի անգլիական որիյենտացիան:

Ֆրանսիայում և Սիրիայում գործող ռամկավարները հարում են ֆրանսիական որիյենտացիային: Համեմատամար ավելի անկախ են Հունաստանի և Ամերիկայի ռամկավարները: Սակայն Հունաստանում նրանք շարունակ յերերգում և տատանվում են, իսկ Ամերիկայում ել «կանգնած են» ամերիկան որիյենտացիայի տեսակետի վրա:

Վորևէ «կենտրոնական կոմիտե» բառիս իսկական իմաստով այդ կուսակցությունը չունի, թեև Փարիզում գտնվող կենտ-

Յոնական, մարմինը տրամադիր և իրեն համարել այդպիսի կենտրոն և մեծագույն ճիգեր ե թափում իր զեկավարությանը յենթարկել բոլոր մյուս յերկրների ռամկավարներին: Փարիզում են գտնվում ռամկավար զիմավոր լիգերները— Արշակ Զովանյան, Պողոս Նուպար փաշա, Ա. Դարրինյան, Թերզիպաշյան, Հրաչ Յերվանդ և մյուսները:

Հսու յերեսւյթին ամենից անկախ գործողը Ամերիկայի կուսակցությունն է: Դրա համար ել Փարիզը ամենից շատ ուշագրություն և գարձնում Ամերիկայի ռամկավարների «քաղաքական գառտիարակության» վրա: Դեռ անցյալ և համանցյալ տարի Փարիզից Ամերիկա ելին մնկնել հենց այդ նպատակով Արշ Զովանյանը և Հրաչ Յերվանդը:

Թե վորքան հաջող կերպով և ընթանում դրանց միսսիան այդ յերեսւմ և նրանից, վոր յերկուսն ել հասնելով Ամերիկա և ծանոթանալով «ամերիկյան միջավայրին» համակերպում են իրենց «կուրս»-ը տեղական պայմաններին և բանեցնում ճիշտ այն լեզուն, ինչ վոր համապատասխանում եր տեղական կազմակերպության «կուրս»-ին: Այդ կողմից խիստ ուսանելի յեր Զովանյանի յելույթը սենատոր իինդի դիմ: Չնայած նրան, վոր Յեվրոպայի ռամկավարները տրամադիր ելին Թյուրքիայի դեմ նիզակներ շարժող այդ «հայասերին» փառաբանել, Ա. Զովանյանը յենթարկվելով ամերիկահայ ռամկավարների աղջեցությանը բռնում և միանգամայն բացասակար դիրք կինզի հանդեպ:

Ըստհանուր այդ ուրվագծից հետո, մենք կարող ենք անցնել ռամկավար առանձին հատվածների քաղաքականության բնորոշմանը Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Խորհրդային Հայաստանի հանդեպ ռամկավար կուսակցության դիրքը մեծագույն չափով բացարձում և անշուշտ ռամկավարների և դաշնակցականների միջև յեղած թշնամյանքով:

Սակայն, միաժամանակ խոշօր և կարելի յե ասել—ամենաառաջնակարգ նշանակություն ունի այն, վոր ռամկավար ըստ ական կուսակցություն հիմնական սոցիալական հետապնդության հետ կովկասահան այլական հետապնդությանը վոչ թե կովկասահան այլ, այլ գաղութահայ ըուրժուագիտան եւ:

Այդ բուրժուացիան յերեք կաոլված չի յեղել տնտեսական շահերով Կովկասի կամ Ռուսիայի հետ: Այդ բուրժուացիան սեփականություն չի ունեցել Կովկասում և միաժամանակ առանձին անտեսական ակնկալություններ ևս չունի այդտեղ: Բնակա-

նաբար Հայաստանում կատարված սոցիալական հեղափոխությունը տնտեսական վոչ մի հարված չհասցնելով արևմտահայ բուրժուազիյին, չեղ կարող վերջինի շարքերում ստեղծել այն տեղությունն ու թշնամանը, վոր հատկանշական եր կովկասահայ փախստական բուրժուազիայի համար։ Մի չնչին բացառություն միայն կադմում եր անզիահայ բուրժուազիան, վոր հետեւ լովի իր յերկրի բուրժուազիայի բաղաքականությանը՝ կանգնած եր թշնամական, կիսասպասողական տեսակետի վրա։

Կար մի ուրիշ հանդամանք ևս, վոր դրդում եր ոամկավարներին բանել վորոց դիրք Խորհրդային Հայաստանի նկատմամբ։ Հայ բաշեկիկները ջարդել և ջախջախել եյին գաշնակցականներին, այն դաշնակցականներին, վորոնք մրցակիցներ լինելով, նկատելի անբավականությունն եյին պատճառում գաղութներում արևմտահայ բուրժուազիային։

Եերբորդ պատճառը այն եր, վոր Խորհրդային Հայաստանը՝ բարեկարգելով յերկիրը, նպաստավոր պայմաններ եր ստեղծում վորբերի ապահովման և գաղթականական խնդրի լուծման համար։ Թե վորբերը և թե գաղթականները մեծագույն հոգսեր եյին պատճառում ոամկավարներին, ահազին գումարներ եյին կլանում գաղութահայ հասարակական և բարեգործական հաստատություններից և իմակերիալիստական պատերազմի ծանր հետեանքների պատասխանատվությունը բարդում եյին ոամկավարների ուսերին։

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, ոամկավարների տրամաբանությամբ, ազատում եր նրանց բազմատեսակ այդ հոգսերից։

Այդ հոդի վրա ել կազմակերպվում եւ ոամկավարների յուրօքինակ սմենով են ականանությունը։

Ըստունելով և ձանաչելով Խորհրդային Հայաստանի իշխանությունը՝ ոամկավարները շիշտում են, վոր այդ իշխանությունը տվյալ քաղաքական շրջանում միակ փրկարար իշխանությունն և «հայ ժողովրդի» համար, և վոր շնորհիվ Ռուսիայի ոգնության Հայաստանը հնարավորություն և ստացել տնտեսապես վերածնվելու և վերակենդանանալու։

Խորհրդային իշխանության արտաքին քաղաքականությունը հոաշտպանելով, ոամկավարները միաժամանակ չեն ծածկում այն, վոր իրենք տվյալ ժամանակաշրջանը համարում են անցողական մի ետապ և «մեծ հույսեր» են տածում, վոր Խորհրդային Հայաստանի կառավարությունը կարողանա «գիշանադիտական ու-

դիներով՝ իրականացնել Հայաստանի տերրիտորիայի լայնացման «ազգակին ծրագիրը»:

Ցենելով այդ գրություններից՝ ռամկավար մամուլը իր կողմից կոչ և անում գաղութահամ մարմիններին ոժանդակել Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշխնության դորձին:

Բայց ցուցագրելով իր այդ գրական վերաբերմունքը՝ մինույն ռամկավար մամուլն առաջարկում ե իր կողմից Խորհրդային Հայաստանի կառավարությանը մի շարք պահանջները:

Ամենից առաջ Խորհրդային Հայաստանից պահանջվում է ազգային քաղաքականության «կիրառում» կուլտուրական շինարարության բնագավառում:

Ապա միաժամանակ «առաջարկվում» և խորհրդային իշխանությանը ավելի մեծ քանակությամբ գաղթականներ ընդունել, և իր վրա վերցնել գաղթականական խնդրի լուծումը և դադթականների ապահովման դորձը:

Ցեղե 1921—23-ին այդ վերջին յերկու կետերը չեյին առաջարկում առանձին սրությամբ, ապա 1924-ից հետո այդ պահանջներն ավելի և ավելի կտրուկ կերպով են սկսում առաջադրվել: Յեկահան հենց այդ պահանջների, առանձնապես վերջին կետի առաջադրման ընթացքում ռամկավար կուսակցությունը սկսում ե անցնել ավելի ագրեսսիվ քաղաքականության:

Ցեղը Խորհրդային Հայաստանի կառավարությունը իր կողմից առաջարկում ե վերաբարձնել արտասահմանյան բարեկործական հիմնարկությունների մոտ կուտակված գումարներն ու կտակները, ռամկավար-ազատական կուսակցությունը կամ հրաժարվում և կատարել այդ պահանջը կամ ել՝ լավագույն դեպքերում մի շարք պահանջներ և առաջադրում իր կողմից և ապա միայն հայտնում իր համաձայնությունը: Այդ կողմից խիստ ուշադրավ են Խերյանների, Սանասարյանների, Կյուլպենկյանի և Մելքոնյանների կատակների պատմությունը, իր ժամանակ հենց ռամկավար շրջանից յեղել են անհատներ, վորոնք դատապարտության են յենթարկել ռամկավարների և Բարեկործական Միության յերկդիմի գործելակերպը Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ամենաբնորոշը այդ կողմից պետք ե համարել կարիկյանի յելույթը ռամկավար կուսակցության վարիչների գեմ: Յեղիպատուում կարկանդանին ձայնակցել և «Արև» որաթերթի խմբագիրը, պ. Հովհ. Հակոբյանը:

Այդ փոքրիկ միջաղեպի շուրջը բռնկվում են շատ շուտով և

ուրիշ տարտաճայնություններ ռամկավարների շրջանում:

Ըստունեղով Խորհրդային Հայաստանի արտաքին քաղաքականության ճշտությունը՝ ռամկավարների մեծամասնությունը շարունակում է վարել Թյուրքիայի նկատմամբ իր հին տրագիցիոն քաղաքականությունը:

Հակառակ դրան—Կարիկանը, Հով. Հակոբյանը, Մեսիալանը պարզուց կերպով ընդդում են, վոր ազգանական հին քաղաքականությունը Թյուրքիայի նկատմամբ ինչել և միանգամայն մասնաբեր թյուրքային համար, և վոր միմիայն խորհրդային իշխանության գործելակերպի վճռական կիրառումը կարող է ապահովել հայ աշխատավորականության դրությունը:

Իրենց համարձակ յելույթների համար այդ յերկու գործիչներն ել յենթարկվում են բանատրանքի ռամկավար կուսակցության կողմից: Կարիկանը ինքը հեռանում է կուսակցության շարքերից, իսկ Հակոբյանն ել հեռացվում է իր պաշտոնից:

Այդ միջազգայը ինքնին արգեն մերկացնում եր ռամկավարների գասակարգային յեռությունը:

Ներկայում այդ բոլորը գառնում են կարծես ավելի և ավելի վորոշ, թեև այժմ ել արտասահմանյան աշխատավորության լայնագույն զանգվածների ճնշման ներքո, ռամկավար կուսակցությունը հանդես է գալիս մասաններին խարելու համար, վորապես Խորհրդային Հայաստանի բարեկամ:

Մեր ուրբագիծը լրացնելու համար պետք է շեշտենք, վոր ամերիկանայ ռամկավարների դիրքը այժմ ել բավական տարբերվում է Յեվրոպայի ռամկավարների քաղաքականությունից:

Բացատրվում է այդ—անշուշտ ամերիկանայ գաղութի սոցիալական գաղմով: Այստեղ բանվորությունը մեծագույն տոկոսն է կազմում հայ բնակչության, և այդպես լինելով՝ նա բնականականաբար խիստ նկատելի ազդեցություն է թողնում և ամերիկանայ կուսակցությունների վարքագծի վրա:

Շատ բնորոշ է այդ կողմից ամերիկանայ ռամկավարների պաշտոնական օրգան «պայքար»-ի դիրքը Խորհրդային Հայաստանի ոսցիալիստական շինարարության նկատմամբ:

Շեշտելով այն, վոր իրենց, ամերիկանայ ռամկավարների համար Խորհրդային Հայաստանը նվիրական է, վորպես «հայ ժողովրդի և հայ ազգի» կենտրոնավայրը, «Պայքար»-ը հայտարարում է, վոր ինքը հաշտվում է և կոմունիզմի հետ, քանի վոր այդ «կոմունիզմը» հնարավորություն է տալիս Հայաստանին «պե-

տական միջոցներով՝ վերաշինել քանդված յերկիրը և բարձրացնել չքաղոր աշխատավորության տեստեսական կացությունը: Նույնիսկ «ազգային շահերի» տեսակետից հայ բաշկեկների «կոմունիզմը» խրախուսելի յե, քանի վոր աշխատավորությունը կաղմում է Հայաստանի բնակչության գերազանց մեծամասնությունը: Այդպես ե ավարտում իր առաջնորդողը «Պայքար»ը:

Ինչպես տեսնում ենք՝ հայ սմենովեխականությունը ներկապարագայում հանդես ե դալիս միանդամայն ուրույն ձեռփ, վորը հակառակ և մնացյալ ռամկավար որդանների խիստ վորոշ քաղաքականությանը: Այսորվա ռամկավարների մեջ կարելի յե նկատել ներկայումս միևնույն շերտավորումը այն տարբերությամբ միայն, վոր ներկայումս ռամկավարների շրջանում իմպերիալիստական պետությունների հակախորհրդային քաղաքականության ուժեղացման աղղեցության ներքո՝ հետզհետեւ նկատվ ե ուժեղանալ ազգեստիվ թերու: Ազելի քան ակնհայտնի յե, վոր վաղ թե ուշ այդ թերի ավելի հետեղական ներկայացուցիչները պիտի միասնական բրոկ կազմեն Դաշնակցության հետ, ընդում ենորդրային Հայաստանի: Այդ կողմից խիստ նշանակալից են Վահան Թեքեյանի, Վահան Մալեզյանի, Արտակ Դարբինյանի և նման գործիչների «դիվանագիտական» ճիգերը «համազդային» ընդհանուր կազմակերպության իրազործման ուղղությամբ: Սկսելով «Խորհրդային Հայաստանի» ճանաչումից՝ հայ բուժուազիայի այդ ներկայացուցիչները անցնում են աստիճանաբար դեպի խորհրդային իշխանության բացահայտ թշնամիների բանակը:

II

«Սմենովեխականների» յերկրորդ խմբին են պատկանում միշտը նախկին դաշնակցական գործիչներ—Զալիսուշյան, Քաջազնունի, Արշ. Ղաղարյան, Բաղդասարյան: Դրանք բոլորն ել հանեղս են յեկել առանձին բրոշյուրներով:

Ամենահետեղականը և արմատականը այդ հրապարակագիրը ների շարքում Գր. Զալիսուշյանն եւ Նրա գրքույկի վրա մենք կանոն ենք առել ավելի մանրամասն գեռ յերկու տարի առաջ^{*)}):

Այստեղ հարկավոր ենք համարում շեշտել միայն այն, վոր Գր. Զալիսուշյանը հակառակ իր մնացյալ ընկերակիցներին՝ անհամեմատ ավելի սուր կերպով ե խարազանուած դաշնակիզմի

^{*)} «Հայ աղդայնականների ուղին» Մասկով 1924 թ.

վողջ գործնեյությունը։ Նա համենայն դեպս վորոշակի կերպով խարազանման ե յեթարկում հայ նացիոնալիստական ըոմանտիկան, այլ խոսքով—վոչ միայն նորագույն դաշնակցականների պրակտիկան, այլ նաև դաշնակիզմի վողջ անցյալը։ Այլ վերաբերմունք ունեն միանգամայն մնացյալ սմենովեխականները։ Դրանցից Ա. Ղազարյանը թերևս սմենաբնորոշն ե. այդ պատճառով նրա հայացքների բննության վրա անհրաժեշտ ե կանգ առնել առանձին։

Ինչ վերաբերքում ե Քաջազնունուն, պետք ե ասել, վոր նա հանդես ե յեկել բավական մեծ մի գրությամբ, վորը չնայած նրան, վոր գրված ե ուժեղ գրչով, ներկայացնում է իրենից նացիոնալիզմի պաշտպանության մի փորձ։

Ըստունելով Խորհրդային Հայաստանի իշխանությունը և քննության յենթարկելով դաշնակցական կառավարության գործնեյությունը, Քաջազնունին կոչ ե անում բոլոր դաշնակցականներին, վար գնել զենքերը և յենթարկել Խորհրդային իշխանությանը։

Բայց այդ բոլորի հետ միասին նա անում ե մի շարք այնպիսի հայտարարություններ, վորոնք առանձին բնույթ են տալիս այդ կապիտուլցիային։

Երկնելով սմենովեխականների սովորական արգումենտներն այն մասին, վոր հայ բայլշեկիները փրկել են Հայաստանը, հայ ժողովրդին, «վողջ հայությունը» և շեշտելով այն, վոր միմիայն երական այդ Հայաստանի վրա հենվելով կարելի յե նոր քայլեր անել դեպի «ազգային» վաղեմի իդեալի վերջնական իրագործումը, Քաջազնունին հայտարարում ե, վոր հայ բայլշեկիները միենույն դաշնակցականներն են, վոր բայլշեկիները շարունակում են դաշնակցականների գործը, վոր «փրկելով» Հայաստանը՝ իրերի տրամաբանությամբ նրանք պիտի ափելի ևս առաջ ընթանան «ազգային իդեալի իրագործման» ուղիով։

Այդպիսով Քաջազնունին չի կարողանում, կամ ավելի իշտն, չի ցանկանում նկատել այն, վոր Խորհրդային Հայաստանը—դասակարգային պետություն ե, բանվորների և զյուղացիների պետություն, միջազգայնական կառավարություն։ Ավելի ևս համոզիչ դարձնելու համար «ազգային» իր մոտեցումը, նա պնդում ե, վոր ի վերջո Խորհրդային Հայաստանում կիրառվող կոմունիզմը այնքան ել մվասակար չե, վոր Տոլստոյն ել, և ինքը Քաջազնունին ել կոմունիստական «վարդապետության» հետեւրդներ են։

Այդպես խառնելով բոլոր հասկացողությունները ի մի, Թաղնունին աստիճանաբար անցնում ե այն մտքին, վոր «Հին» դաշնակցականները, «լավ» դաշնակցականները, Ռուսութիւնները և Զավարյանները յեղել են ժողովրդականներ, սոցիալիստաներ, և վոր հայ ժողովրդի «գժրախառության» համար պատասխանատու յե վոչ թե Դաշնակցությունը, այլ այդ Դաշնակցության անխոռնեմ և «անիմաստ» զեկավարները, նորագույն դաշնակցականները «Փարիզի» և «Պետերբուրգի» հայկական գաղութների ձախին հետևող դաշնակցականները:

Ինչպես տեսնում ենք սմենովեխական այդ կրնցեալցիան մի ծայրով հանդում ե դեպի Դաշնակցության պաշտպանությանը, դեպի նացիոնալիզմի հիմնավորումը, «հին ուղիների», «հայդուկների» և «վոշիկների» ուղիների պաշտպանությանը:

Նա խարազանում և քննադատում ե ռվատ դաշնակցականներին—հին Դաշնակցությունը փրկելու համար, քննադատում ե դաշնակցական կուսակցության քաղաքականությունը նորաձե, շտկած և կոկված նեղ նացիոնալիզմի հիմնավորման համար: Ցայտուն կերպով աչքի յե զարնում այդ ամենը, յերբ քննության ենք առնում նրա «Հայաստան» և Թյուրքիան» վերնազրով դրբույկը:

III

Թաջազնունու այդ գրքույկը գրված ե 1924-ին, Այդտեղ նա հանդես ե գալիս, վորպես ռուսական որիյենտացիայի համոզված կողմնակից: Յեկանելով հայ աղքային հին իդեալների իրագործման անհրաժեշտությունից, Թաջազնունին քննադատության և յենթարկում իր նախկին ընկերոջ Թյուրքոֆիլական տեսակետը: Հիմնական այն առարկությունները, վոր բերվում են այդ տեսակետի դեմ այնքան ել բարդ չեն, Այդ արգումենտները հետեւյալն են.

1) Թյուրքիան յերբեք հաշվի չպիտի առնի դաշնակցականներին, վորովհետեւ ռեալական վոչ մի ուժ չեն ներկայացնում դրանք:

2) Թյուրքիան չի հավատում և չի ել հավատա յերբեք դաշնակցականներին:

3) «Յիթե Թյուրքիան կարողացավ խլել ռուսների ձեռքից Ղարսը, ինչի՞ւ պիտի տա դաշնակցականներին այդ թանգարժեք ամբությունը (զեռ վանն ու Մուշը վրան ավելացրած) քանի

վոր Հայաստանն այդ պարագայում պիտի դառնա պատճեց Թյուրքիայի և Ռուսաստանի միջև»:

Հետաքրքրական ե այն, վոր Թաղաղնունին չի ել ծածկում ամեննին այն, վոր «Ռուսաստան» ասելով նա նկատի ունի վոչ միայն «բալշեիկյան Ռուսաստանը», այլ առհասարակ ամեն մի Ռուսաստան:

Դրա համար ել նա «բալշեիկյան» ասելու փոխարեն հաճախ ասում ե — ռուսներ»:

«Հայաստանի միակ orientation-ը, ասում նա, Ռուսաստանն եւ Հայաստանը կարող ե ապրել միմիայն Ռուսաստանին կառչած, ուրիշ քաղաքական հեռանկար չունի նա» (եջ 52—53): Մի ուրիշ տեղու կարծիս իր միտքը ավելի կոնկրետ կերպով ընդգծելու համար նա ասում ե՝

«... Նախադասելով միլիական Թյուրքիան բալշեիկյան Ռուսաստանին (կ ամ Ռուսաստանին ընդհանրապես) ու մերձենալով քեմալական—մուսավաթական—վրացմենչնիկյան բլոկի մը հետ, դու չզիտի կարողանաս մնալ լոյալ Խորհրդային Հայաստանի հանդեպ, սիրաշահես բարեկամներիդ ու միաժամանակ խույս տաս վտանգավոր քայլերից»... (եջ 46—47):

Մենք արդեն դիտենք, վոր Թաղաղնունին այսորվա քաղաքական գոյավիճակը համարում ե լոկ ժամանակավոր մի ետապ, մի անհրաժեշտ կետ, վորի վրա հենվելով և վորից յելնելով «հայությունը» պիտի կարողանա ամփոփել իր ուժերը գալիք ավելի նպաստավոր շրջանում լուծելու համար «հայկական հարցը»:

Թյուրքական որիշենտացիայի գեմ ե նա գլխավորապես հենց այն պատճառով, վոր Թյուրքիան նրա համոզմամբ չի կարող յերբեք ստեղծել այդ հնարավորությունը:

«Թյուրքերի հետ, ասում ե նա իր բարեկամին, հասկացողության գալու կամ այդ ուղղությամբ վորեն փորձ անելու մի սոսկ խոսակցություն սկսելու համար, ամենից առաջ դու պիտի հրաժարվես «Միացյալ Հայաստանից» ու առհասարակ վորեն հողային պահանջներից, գոհանաս ներկա սահմաններով և մի նոր ստորագրություն ավելացնես Բաթումում, Ալեքսանդրոպոլում ու Ղարսում կնքված դաշնագրերի տակ: Սա պարզ ե, այնքան պարզ ու անվիճելի, վոր դու հենց այդտեղից ել ուզում ես սկսել հայկական «նոր քաղաքականությունը»» (եջ 40):

Կարծում ենք պարզ ե, հայ սմենովեխականության հրապամակախոսի հայեցակետը:

Իրապես դրանում զարմանալի վոչինչ չկա: Միևնույն տեսակեաի վրա յեն կանգնած, ինչպես հայտնի յե մեղ, նաև բոլոր մյուս սմենովկի խականները:

Կանգնած լինելով այդ տեսակետի վրա, նրանք միաժամանակ խորհրդային որիցենտացիայի համոզված կողմնակիցներն են, և հակառակ են ամեն տեսակի ավանտյուրիստական ձեռնարկությունների, ամեն տեսակի դավադրությունների և ապստամբությունների:

Քաջազնունու պոլեմիկան իր բարեկամի հետ հետաքրքրական և ի միջի այլոց նաև այն տեսակետից, վոր դրսեվորում ե բավական վորոշ կերպով արտասահմանյան դաշնակցականների այսորվա քաղաքական ուղեղիծը»:

«Միթե, ասում ե նա իր անզուսպ այդ բարեկամին, կուրացել ես այն աստիճանի, վոր չես տեսնում թե ուր ես զնում, ուր պիտի գնաս ճակատագրականորեն, հենց վոր մի անդամ վոտդ դնես այդ նոր ճամբու վրա: Դու շարունակ հավաստիացրել ես, թե պատրաստ ես ամեն կերպ աջակցելու Հայաստանում կատարվող շինարարական աշխատանքներին—թեղ վոր սեծիմը բայլշնիկելան լինի—և շատ նեղացել ես, յեթե մեկը կասկածի տակ ե առել անկեղծությունդ: Բայց սա ինչ տարորինակ ձեի աջակցություն ե խռովությունների մշտական սպառնալիքի տակ պահել յերկիրը... Շինարարական ինչ աշխատանք կարող ե կատարվել. ընդհանուր անվստահության մթնոլորտի մեջ: Մարդիկ ինչ սրտով սերմանեն գաշտերը, նորոգեն տնելին ու ճանապարհները, մաքրեն առուները, չորացնեն ճահիճները, կարգավորեն դպրոցն ու արհեստանոցը, յեթե յերկյուղ պիտի ունենան թե՝ վաղն և յեթ այդ բոլորը քանդիլու յե ներքին խռովությունների կամ թյուրքական ներխուժման պատճառով» (Եջ 45):

Այստեղ յես կարող եմ ընդհատել այդ դիալոգը:

Պատկերը, ինչպես տեսնում ենք, խիստ պարզ ե ու վորոշ:

Սկզբունքային տարածայնություններ չի կարելի գտնել նացիոնալիզմի յերկու ներկայացուցիչների միջև: Վեհը միմիայն գործելակերպի, այսորվա վարքագծի մասին եւ:

Մեկը, ավելի խելացի և հեռատես նացիոնալիստը՝ զենքերը վար ե զնում, խօսապահնում ե իր պարտությունը և կոչ ե անում համակերպվել տիրող պայմաններին, ճանաչել Խորհրդային Իշխանությունը, մասնակցել յերկրի տնտեսական շինարարությանը:

Իսկ մյուսը, ավելի անզուսպ՝ չի ցանկանում ընթանալ այդ

ուղիով, շարունակում և նիզակներ շարժել խորհրդային իշխանության գեմ, բացորոշ կերպով հայտարարում ե, վոր ինքը գալիք ապստամբությունների և հակախորհրդային ձևնարկությունների կողմանակից ե. և նույնիսկ ընդգծում ե, վոր ավյալ ժամանակաշրջանում այդ բոլորը նա մատղրվում ե իրազործել կոթնած Թյուրքիայի ովհնության և աջակցությանը:

Բանավեճը այնքան ել սուր չեւ Ընդհանուր տոնը—զոնն Քաջազնունու կողմից—կիսաբարենկամական ե, այնինչ այն դրությունները, վոր նա յեւ առաջադրում, պահանջում են նրա կողմից, ինարկե, ավելի կտրուկ վոճ Դա ևս բացատրվում և Քաջազնունու ընդհանուր հայեցողությամբ:

Նա շարունակում և մնալ «Հին գտաի»—«Միացյալ, անկախ Հայաստանի» պաշտպանության տեսչում և յերազում և «Համագործային այդ իգեալի մասին» Նա ապրում ե այսոր ել նույնիսկ Խորհրդային Հայաստանում, վաղվա այդ նվիրական անուրջներում Յեղ յեթե «Ճանաչում» և «ընդունում» և անգամ այսորվա իշխանությունը, բանվորների և գյուղացիների հանրապետությունը—անում և այդ, վորսկս հայ բուրժուազիայի ավելի «Ճեռատես» ներկայացուցիչ, անում ե—իը ուժերը առյամանակ հավաքելու նպատակով, ժամանակավոր կայանի մոտ, վորսկսդի վաղվա որերին կարողանա իրազործված տեսնել նվիրական յեւազը «Միացյալ Հայաստանի» մասին:



«ՆՈՐ» ԹԵՇ ՀԻՆ ԴԻՐՔԵՐ

Հայկական «սմենովելսականների» շարքերում խիստ ուշագրավ գեմքեր են Պարսկաստանում հրատարակվող «Նոր Գաղափար» հանդեսի յերկու աշխատակիցները—պ.պ. Բաղդասարյանը և Ար. Ղազարյանը:

Յերկու գործիչներն ել հանդես են յեկել գեռ 1925-ին, վորապես «խորհրդային իշխանության» համոզված կողմակիցներ։ Յեկ այսոր ել—յերկու այդ հրապարակագիրները կանգնած են հայկական սմենովելսականության պլատֆորմի հիմնական դիրքերի վրա։

Բաղդասարը առմամբ Բաղդասարյանի և Ղազարյանի պաշտպանած այդ պլառագործը ներկայացնում է իրենից ոռուսական սմենովելսական հոսանքի հայկական վարիանտը։

Ընդունելով «խորհրդային վարչաձեռ», Ա. Բաղդասարյանը և Ա. Ղազարյանը կարծես դիտավորությամբ վոչ մի խոսք չեն ասում խորհրդային իշխանության տնտեսական պատվանդանի մասին։ «Սոցիալիզմից» նրանք խորշում են այնքան, վոր խոսափում են նույնիսկ վարեե տեղ գործածել այդ խոսքը։

Ավելի քան վորոշ են նաև այն, վոր «խորհրդային իշխանությանն» ել մոտենում են դրանք իրենց ուրույն՝ «ազգային» և «ապահասակարգային» տեսակետից։

Յեկ ահա յելներով հենց այդ հիմնակետից՝ հայկական սմենովելսականները—«Խորհրդային Հայաստանն» ել համարում են «հայ ազգի» պետություն։ Դրա համար ել քննադատության յենթարկելով դաշնակցականների քաղաքականությունը՝ «Խորհրդային Հայաստան»-ի այդ «բարեկամներց» մոտենում են «նոր իշխանության» ազգայնական վորշ ակնկալություններով։

Ահա ազգայնական նորաձեւ այդ ակնկալություններն ել

բնորշում են հայ սմենովելիսականներին, և կազմում են նրանց ըղավանած» հայեցողության տիպիքական կողմը:

Ի վերջո հայկական սմենովելիսականության իսկական վոդին ցուցադրվում ե հենց այդ ձևով: Փույթ չե ամեննին, վոր հաճախ նա պարուրվում ե ընդհանուր և առաձգական պարբերությունների բավական իիտ ցանցով: Ուշադիր ընթերցողի համար այնքան ել դժվար չի լինի քանդել այդ ցանցի թերթը և մերկացնել հայ նորագույն նացիոնալիզմի իսկական «գեմքը»:

I

Կանգ առնենք ամենից առաջ Բաղդասարյանի հոդվածի վրա*):

Դա—բավական հետաքրքրական մի տեսություն ե:

Հեղինակը, ըստ յերկույթին, հետեւել և մեծապույն ուշադրությամբ Խորհրդային Հայաստանի կյանքին և գրականությանը: Փաստերի և դեմքերի նկարագրության ժամանակ նա աշխատում է լինել «որյեկտիվ», թեև չի կարողանում ծածկել իր առանձին վերաբերմունքը դեպի նկարագրված դեպքերը: Չի կարելի համեմայն դեպս ծածկել այն, վոր սալորական հայ սմենովելիսականների մեջ Բաղդասարյանը կարծես «ամենաանկեղծն» և ամենահետանդապականը:

Հետեւողական ե նա այն տեսակետից, վոր չի հրաժարվում իր աղքայնական աշխարհայեցողությունից և բացորոշ կերպով հայտարարում ե, վոր «Խորհրդային Հայաստանին» ել մոտենում և հայկական մեսսիանիզմի տեսակետից:

... Կոմունիստները փրկել են հայությունը, նրանք կառուցում են յերկիրը, և կառուցում են լավ ու կանոնավոր կերպով: Հետեւաբար անհրաժեշտ ե ոդնեւ մեծամասնականների բոլոր այն ձեռնարկություններին, վորոնք ավելի թափ են տալիս «հայ ժողովդի տնտեսական և կուլտուրական վերածնությանը»:

Ենս պատմում եմ իմ խոսքերով, ի հարկե, Ս. Բաղդասարյանի ընդարձակ հոդվածի հիմնական միտքը:

Դրանումն և կայանում նրա արծարծած «իմաստամիրությունը»:

Դա—«խելքի յեկած», «անցյալի դառն փորձերից հետո

* Այդ հոդվածը լույս է տեսել նաև առանձին հրատարակությամբ, 1927-ին Թավրիզում:

սթափված» և այժմ արդեն ուշադիր և հետանկատ հայ բուրժուաց կան մտավորականի մուեցութիւն ե, վորը շատ լավ զիտե, վոր պատամության անփլն անհնարին ե այլևս ծոել, և վոր «հայ ժողովդիք» մնացած բնկորների համար այսուհետեւ ամենալավ քաղաքականությունը — համակերպման քաղաքականությունն ե:

Դա—նորագույն բուրժուազիայի գաղափարախոսությունն ե, նրա «Նոր խոսքը»:

Ս. Բաղդասարյանը պատկանում է հայ նացիոնալիստ մտավորականության այն դեմքերի շարքին, վորոնք հենց այդ հեռանկատ համակերպման մըջոցով ցանկանում են նորից վերականդնել նացիոնալիզմի խախտված դիրքերը և մասնակից դառնալ յերկրի «շինարարարական» աշխատանքներին այն չափով և այնքան միայն, վորչափ այդ կարող կլինի նպաստել «հին դրսությունաբարմանը իսկ «հին դատ» ասելով Բաղդասարյանը նկատի ունի հայկական մեսսիանականների պրոպագանդը — «վեց վիլայեթների» մասին:

Այդպես լինելով, Ս. Բաղդասարյանը, մեր կարծիքով, տարբերվում է սմենովելիյան հոսանքի բոլոր մյուս ներկայացուցիչներից, առաջին հերթին, նրանով, վոր չի ծածկում վոչ մեկ փաստ և չի խնայում քննական վոչ մի խոսք գաղնակցական կառավարության բնորոշման և խարազանման համար: Այդ կողմից շատ հետաքրքրական ե նրա աշխատության յերկրորդ զլուխը («Հայաստանն ինչպես խորհրդայնացավ»):

«Յերբ Յերեանում, պատմում ե նա, լուր և ստացվում նոյնեմբեր 29-ի հեղափոխական կոմիտեյի կազմակերպման մասին (այդ մասին հեռազրում ե դաշնակցական զորամասերի հրամանատար Սեպուհը Դիլիջանից), դաշնակցական պարլամենտական ֆրակցիան, նոյն որը, նոյնեմբեր 29-ի յերեկոյան, պարլամենտի շենքում ժողով գումարից, ուր հրավիրված եյին, բացի ֆրակցիայի անդամներից, նաև կառավարության, կուսակցական մարմինների (կենտրոնական ու քաղաքային մարմինների) անդամները և պատասխանատու կուսակցական ընկերները»*):

Ժողովում քննության ե առնվում մեծամասնականների Քարվանսարա մտնելու և Լեզրանի հետ բանակցություններ վարելու հարցը:

... «Վերոհիշյալ ժողովում, շարունակում ե Ս. Բաղդասարյանը, մանրամասն քննության առնվեց ստեղծված կացությունը»*): «Նոր Գաղափար», եջ 302. Թագրիզ, 1927 թ. գիրք I.

նը: Մեկ կողմւց, տաճիկների հետ դեռ վերջնական հաշտության դաշն չեր կնքված, իսկ մյուս կողմից, մնձամասնականների հետ համաձայնության չգալու դեպքում, նոր պատերազմի առաջ ելին կանգնելու Պետք եր ընտրել յերկուսից մեկը: Բոլորի համար արդեն պազ եր, վոր հայ զինվորը, լավ և ասել՝ հայ ժողովուրդը, ուսւների դմ չեր կովելու հայ ժողովուրդը ուսւս ժողովրդին սիրում եր և փրկության հույս՝ միայն նրա վրա յեր զնում»:

Ապա նկարագրելով այդ ժողովի վիճարանությունները, Ս. Բաղդասարյանը նկատում է.

«...Մի պարզ յեզրակացություն կարող ենք հանել, յեթե մինչև իսկ յերկիրը կամովին չհանձնելին, այն անցնելու յեր մեծամասնականներին: Ուրեմն յերկիրը մեծամասնականներին հանձնելու մեջ վոչ թե գերե և կատարել Դաշնակցության բարի կամքը, այլ այն ժամանակ ստեղծված պայմանները, մի կողմից, բյուրուկառավարությունը՝ մյուս կողմից, —իսկ ժողովրդի ուսւսասիրությունն ել յերբոք դ կողմից»:

«Խորհրդայնացումը Հայաստանի համար փրկության, միակ յեկն եր»:

Ս. Բ-ն մոռացել և ավելացնել այն, վոր այդ խորհրդայնացման ամենավճռական կողմանիցն եր ապստամբ ժողովուրդը, վորը բուն Յերևանում արդեն պատրաստ եր վոտքի յելնել և միանալ իջևանից յեկող հեղափոխական զորամասերին: Ահա հենց դրա հետեւանքն եւ դաշնակների «խաղաղասիրությունը»:

Դառնալով Խորհրդային Հանրապետության ներկայացուցչի ընկ. Լեգրանի քաղաքականությանը, Ս. Բաղդասարյանը գտնում է, վոր Լեգրանը կարող եր ազատարեն վոչ մեկ համաձայնություն չկնքել: Սակայն կնքելով այն, նա «աչքի առաջ և ունեցել հայ ժողովրդի ֆիզիքական դոյության շահը: Յեթե այդ մոմենտին Լեգրանը նման համաձայնություն չկնքեր, կարող եր պատահել, վոր դաշնակցական ղեկավարները ծայրահեղ քայլերի դիմելին և իդուր տեղը ժողովրդի արյունը հոսեցնելին, չնայելով, վոր դրանով վոչինչ չպիտի կարողանային շահել»... (եջ 306—307) Դաշնակցականները ժամանակ շահելու և իրենց դիրքերն ամրացնելու, նպատակով ոգագործում են Լեգրանի այդորինակ վերաբերմունքը և նոր խորհրդային կառավարության առաջն առնելու

համար կաղմում են (թեև դա և ապորինի յեր և՛ ուշացած մի ձեռնարկություն) «Ռազմա-Հեղափոխական կոմիտե», վորի մեջ պիտի մտնելին 5 կոմունիստներ և յերկու անդամ ել «Ճախ գաշտականների խմբակից»: Խարերայական այդ մախինացիան անցկացնելու համար գաշնակցականները Տերտերյանին և Դրոյին մկրտել ելին «Ճախ» անունով... «Ճախ գաշնակցականներ ելին հրապարակ դրել և այդ ձախերի ներկայացուցիչներն ելին՝ Դրոն և Համբարձում Տերտերյանը, վորն ավելի քան ծիծաղելի պետք և համարել» (308): Ս. Բաղդասարյանի այդ վորակումը շատ տեղին եր, վորովհետեւ այժմ ել պատահում են միամիտներ, վորոնք հավատ են ընծայում «Ճախ» փուազանորով շղարշված ամենավորոշ գաշնակների խոսքերին: «Ճախ» գաշնակները սովորաբար հանդես են յեկել գաշնակցականների անկման որերին, և իրենց յելույթներով ծածկել են նահանջող նացիոնալիստական բանակի շարքերը:

Այժմ ել դաշնակցական բանակը գտնվում ե այդ վիճակում: Գտնվելով այդպիսի կացության մեջ, նա այժմ ել չի հրաժարվել իր սովորական և այնքան ծանոթ ստրատեգիքական մանուկըներից: Մասսաներին խարելու համար նա ներկվում ե մերթ կեղծ գենուկրատական, մերթ կեղծ սոցիալիստական գույներով: Ավելի հեռատես գաշնակներն այդ մանուկըները խորացնելու նպատակով մի քանի կետերում նահանջում են... և ահա այդտեղ է, վոր հայկական սմենովեխովությունը դառնում ե որիեկտիվորեն վտանք գավոր հոսանք, ասում ենք որյեկտիվորեն, վորովհետեւ ամեններն չենք կասկածում, վոր իրենց սուրյեկտիվ կամեցողությամբ ճնոր դիրքերին կողմանակիցներից շատերը թերևս անկեղծորեն Դաշնակցության և հին ուղիների դեմ են:

Յեթե մի յերեք, չորս տարի առաջ հնարավոր եր սմենովեխությունը համարել քիչ շատե «գրական» յերեւոյթ—այժմ այլևս անհնարին և անել այդ: Այժմ մենք կարող ենք և իրավունք ունենք Խորհրդային Հանրապետական իսկական և անկեղծ բարեկամներից պահանջել ավելի վճռական և կտրուկ խռով:

Զի կարելի այսոր կանգնել յերեկված պայմաններ շեշտված կետի վրա, այն ժամանակ, յերբ միանույն այդ կետի վրա յեն կանգնել նույնիսկ մեր հակառակորդները:

Կարելք կմ արդյոք այժմ հաստատելու և ապացուցելու, վոր խորհրդային իշխանությունն իրապես փրկել և Հայաստանի բան-

վորներին և գյուղացիներին, վոր Խորհրդային Միությունն իրական ոգնություն և տալիս Հայաստանին, վոր մեր զգալի նեփիցիտը միշտ ծածկում ենք Միության ոգնությամբ, վոր մեղ մոտ զայություն ունի իսկական խաղաղություն, և վոր Խորհրդային Հայաստանի տնտեսական կյանքն որ բառ որևէ բարձրանում և... Այդ բոլորն ակսիոմաներ են, շատ պարզ և շատ տարբական ճշմարտություններ, վորոնք արտահայտվում են նույնիսկ բուրժուական բանակին հարող ոտար և հայ մտավորականների կողմից։ Ամենին կարիք չկա նուե ապացուցելու, վոր հակառակ այդ բոլորին, միջազգային իմպերիալիստները քանդել են Հայաստանը և կոտորածի մատնել նրա ընակչությանը, վոր այդ ուղղությամբ նրանց աջակցել են հայ գաշնակներն իրենց տիմար և ավանտուրիստական գործելակերպով, վոր իրենց յետամյա գործնեյության ընթացքում գաշնակները չեն կարողացել վոչ մի դրական գործ ձեռնարկել ժողովրդական անտեսության բնագավառում և բարականացել են միմիայն սպասողական բնույթ կրող ողբերացիաններով։

Այդ բոլորը դարձյալ ակսիոմաներ են, վորոնք հաստատված են հենց աղջայնական, հենց գաշնակցական գործիչների կողմից։ Կրկնել և ապացուցել այդ բոլորն այժմ ու բավականանալ միմիայն դրանով—քիչ եւ։

Դրա համար ել մենք նրանցից, վորոնք կանդ են առել «նոր զիրքերի» վրա, այսուհետեւ պահանջում ենք ավելի վճռական գործ, ավելի կարուել խոսքեր, ավելի հետեւղական պայքար հայ նացիոնալիզմի դիմ։

Հակառակ պարագայում—«նոր զիրքերի» քաղաքականությունը կարող և նմանվել Ս. Բ.-ի կողմից հիշված «Ճախ դաշնակիների» գործելակերպին, կարող ե ստեղծել նոր մի հենարան մեռնող նացիոնալիզմի համար, կառուցել կամուրջ խորհրդային հասարակականության և նացիոնալիստական բանակի միջև։

Ահա ինչու ասացինք, վոր «նոր զիրքերի» հետեւղների անոր գիրքը կարող ե որյեկտիվորեն ստեղծել նորաձեւ մի նացիոնալիզմ...»

Շատ հեռուն չգնալու համար մենք կանդ կառնենք «նոր Գաղափար»-ի խմբագրի յերկու հոդվածների վրա։ Մինչեւ այժմ ել Ա. Ղաղարյանը, չգիտենք ինչու, խոսում ե հայ սպիտակ գվարդիականների հետ ինչ վոր առանձին լեզվով և բարեկամական տանօվ։

Շատ բնորոշ ե այդ կողմից նրա «Գաղութահայ խնդիրներ» չողվածը: Այդտեղ խռովով ռամկավարների և դաշնակների մասին, Ա. Դազարյանը վորակում է Դաշնակցությունը վորպես «աշխատավորական» կազմակերպություն: Մեզ այդ դարմացնում են Յեթե խոսքը խարված այն շերտերի մասին ե, վորոնք կուրորեն հավատ ընծայելով դաշնակների փքուն խոսքերին՝ հետեւմ են զրանց, ովտք և ասել, վոր այդպիսի խարված աշխատավորների հենարան՝ «ռամկավար կուսակցություն»-ն ել ունի յաղաքական կուսակցության սոցիալական բնույթը բնորոշիս մենք այդպիսի մոմենտներով չենք կարող զեկավարվել: Վիլելմին ել ե ունեցել «աշխատավոր» յերկրպագուներ, բայց զրանով հո նա չի դառել «աշխատավորության իդեոլոգ»:

Բայ եռության, Դաշնակցությունն ել, ռամկավար կուսակցությունն ել բուրժուական կազմակերպություններ են: Յեվ այդպիս լինելով յերկուն ել բոլոր յերկրագնդի ուրիշ բուրժուական կուսակցությունների նման ձգում են խարել բանվորներին և զյուղացիներին: և իրենց հետեւ քարշ տալ «աշխատավորության» միամիտ և անդիտակից շերտերը:

Յենելով իր հիմնական վորակումից՝ Ա. Դազարյանն անում ե համապատասխան յեղակացություն ևս: «Դաշնակցություն»-ը նա համարում է վոչ այնքան վտանգավոր, վորքան ռամկավարներին:

Յեվ այդ թեզն ապացուցելու համար Ա. Դազարյանը մի շաբթ ցիտատներ ե բերում ռամկավար թերթերից և ապա ավելացնում կոմունիստների դեմ ուղղված մի հողվածից հանված կտորից հետո: «Ավելի բիբր հակադրություն քան արել են ռամկավարները կոմունիստական սկզբունքներին, հազիվ թե Դաշնակցությունն արած լինի» (հջ 373): Յեվ ապա միենույն ձևով իր ամբողջ հոդվածի ընթացքում Ա. Դազարյանը լոելով դաշնական և ամենամեծ խիզախությամբ «խորամանկ ռամկավարներին»:

Այն, վոր ռամկավարները «խորամանկ» են—այդ մենք գիտենք ի հարկի: Այն, վոր ռամկավար կուսակցությունը—արևմտահայ բուրժուազիայի կազմակերպություն լինելով, չի կարող խորհրդային իշխանության անկեղծ բարեկամ համարվել—այդ ել հայտնի յե մեզ:

Սակայն մեզ հայտնի յե նաև այն, վոր վորպես «արևմտահայ» բուրժուազիայի կազմակերպություն, նա մերթ ընդ մերթ

վարել և վարում ե Դաշնակցությունից տարբեր գործելակերպ։ Ռամելավար կուսակցության վորոշ խմբակներ անմիջական շահեր չունենալով Խորհրդային Հայաստանում՝ վարում են միենույն գործելակերպը, ինչ վոր սմենովեխովյան հոսանքի հարող գործիչները։ Դրա համար ել այն չափով, վորչափ «անկեղծ» են Քաջազնունին, Ա. Ղազարյանը, Զալիսուշյանը, կարելի յե անկեղծ համարել և այդ ռամկավար գործիչներին։

Դրանով ենք բացարում մենք մասնավորապես այն, վոր ռամկավարները, վորոնք վոչինչ չեն կորցրել «Խ. Հ.»-ում—տարբեր գիծ են վարում, քանի դաշնակուերը Խաբերայություն կլինիք ժխտել այդ։ Մեր ձեռքին են այժմ Ամերիկայում հրատարակվող «Պայքար»ը և Յեղիստոսի «Արե»-ը։ Այնտեղ տրվում է տրադիցիոն հայ նացիոնալիզմի շատ սուր և կտրուկ քննադատություն, ավելի կտրուկ, քան տալիս են Ա. Ղազարյանը կամ Քաջազնունին։ Յեկ մենք չենք կասկածում ամենակին, վոր Հակոբյանը, Մեսիսյանը կամ Թաբակչյանը կոմունիստ չլինելով հանդերձ, միանգամայն անկեղծ կերպով կովում են Խորհրդային Հայաստանի գեմ ուղղված տմեն մի ավանդյուրիզմի դեմ։

Ահա ինչու Ա. Ղազարյանի այնքան կտրուկ վորակումը համարում ենք չափազանց հաղճեղ։

Մենք միամիտ չենք, դիտենք վոր ռամկավար կուսակցությունը, բուրժուական կուսակցություն լինելով զիմում և բուրժուական կազմակերպություններին հատուկ բոլոր սովորական մեթոդներին, զիտենք, վոր նա ցանկանում ե կեղծ խոսքերով մոտենալ մասսաներին և այլն։ Բայց այդ բանն անում են բոլոր բուրժուական հոսանքները և ավելի ևս մեծ չափով նույն գործը կատարում են դաշնակցականները։

Ինչ վերաբերվում ե նրան, թե ով ե ավելի «վտանգավոր»—այդ խնդրին յերկու պատասխան չի կարող լինել։

Դաշնակցությունը ոռւսահայ բուրժուազիայի և այդ բուրժուազիային ծառայող մատավորականության կազմակերպությունն եւ։

Յեկ դրա համար ել հայ կապիտալի այդ կուսակցությունը չի կարող յերբեք «խաղաղ» նստել արտասահմանում։ Չի կարող «խաղաղ մնալ, վորովհետեւ ցանկանում ե իր հին տնտեսական և քաղաքական դիրքերն ստանձնել, ձեռք բերել Բագվի հանքերը, խանութները, Բագվի և Թիֆլիսի շենքերը, նախարարական պաշտոնները...»

Յեզ յերբ Ա. Ղաղարյանը լոելով այդ բոլորի մասին և յել-
նելով Դաշնակցության աշխատավորական եյության վորակու-
մից՝ իր քննադատությունն ուղղում է դաշնակցականների հա-
մար այնքան ատելի ռամկավարների (վորովճետեւ այդ ռամկա-
վարներն են դաշնակների մրցակիցները դադութներում) դեմ,
մենք ստիպված ենք ասելու Մի քիչ ավելի դանդաղ... հարգելի
Ղաղարյանու Թույլ ավելք մեզ կատարել ռամկավարների քննա-
դատության գործու իդուր եք կարծում, թե այնքան «մի ա-
միտա ենք» Մենք շատ լավ ճանաչում ենք և «անկեղծ» և «կեղծ-
ծավոր» բարեկամներինու Մենք տոիթ ենք ունեցել և կունենանք
ել դեռ քննադատելու ռամկավարներինու իսկ գուք, ավելի
լավ կլին ի—ուզ զեք ձեր քննադատությունը Դաշ-
նակ ցության դեմ, վորոնց, ինչպես ինքներդ եք
առում, շատ լավ եք ճանաչում: Բարի յեղեք ուրեմն
ավելի կարուել և հստակ ուզ զություն առ ձեր
ուայքարին, վորուզ զի վոչ վոք իրավունք չունենա-
ասելու, վոր ռամկավարների դեմ կենտրոնացնելով պայքարը
դուք ծածկում եք ձեր ռեալ և դրական վերաբերյունքը դեպի
դաշնակիզմը:

II

Այդպիսի «թյուք» կարծիք կարող ե ստեղծվել Ա. Ղաղար-
յանի մասին, վորովճետեւ նրա յերկըսորդ հոդվածը բավականաչափ
նյութ ե տալիս մի քանի կարևոր յեղբակացությունների համար:
Ամենից տարորինակը հենց այն «քնքույշ» և «քաղցր»
տոնն ե, վոր առանձին յեռանդով գործածում ե Ա. Ղաղարյանն
իր նախկին ընկերակիցների նկատմամբ:

«Կորբեկտությունը» լավ բան ե, ինարկե, բայց վորոշ սահ-
մաններում: Յերբ այդ «կորբեկտությունը» գործադրվում է անձ-
նական քնույթ կրող հարաբերությունների և վոչ թե հասարա-
կական-քաղաքական հրատապ խնդիրների սուր բաղխումների
ժամանակ: Սուրը բարձրացնողի դեմ չի կարելի պայքարել կեղծ
բարոյական ժեստերով կամ խորհրդածություններով: Դաշնակ-
ցական «հայտնի գործիչ» Ա. Արշակունուն (Ա. Հովհաննիսյան)
որինակ, Ա. Ղաղարյանը շարունակ կոմպլիմենտներ ե ասում:
Զգիտենք ինչու նա հիշեցնում ե, վոր Արշակունին յեղել ե՝ Բագ-
վի դաշնակցական համեստ գործիչ, հայ ուսուցչական անդաստա-

նի ժրաջան անդամներից մեկը, վորը հանրապետական Հայաստանի որոք գարձավ նախ՝ յերկրագործության նախարար, ապա՝ զինվորական»...

«Ա. Հովհաննիսյանը, շարունակում և մեր բարեհողի հրապարակախոսը, յեղած և այն համեստ և անմռունչ աշխատավորներից, վորոնք անձից ավելի գործն են սիրել բայց վորովներն են, իրենց աշխատանքի ընթացքում ժողովուրդն ու հայրենիքը միշտ ել բարձր են դասել կուսակցությունից («Նոր Գաղափար», եջ 225):

Մենք չենք կարողանում հասկանալ արտասովոր այդ սեհատիմնաալիզմի պատճառները: Ո՞ւմ համար են ասվում տաղտուկեայդ լամենտացիաները, մւմ են պետք Ա. Ղաղարյանի «անձնական կարծիքները» Պետրոսի կամ Կիրակոսի մասին այն մոմենտին, յերբ ասպարեզի վրա յեն դրված վոչ թե անձնական, այլ հոսարակական խնդիրներ:

Ի՞նչում ե խնդիրը:

Կմ արդյոք սկզբունքային խոշոր վեճ Ա. Ղաղարյանի և Արշակունիների մեջ թե վոչ: Յերկուսից մեկը, կամ Ա. Ղաղարյանը մինչեւ այժմ ել չի կարողացել ազատազրել իր հոգին հին տրագիցիաներից: Դա, իհարկե, կարող ե բացատրել, թե ինչու յեն նա դիմում պուեմիկայի յուրորինակ ձեին, կամ ելի Ա. Ղաղարյանը կարականապես զատապարտում և հայ ազգայնական ավանտյուրիստների, Արշակունիների ու նմանների հակաժողովրդական ու ռեակցիոն քաղաքականությունը, և խսկապես «հրաժարվում» ե նրանցից, ինչպես ինքն և հազարացնում (եջ 227): Այդ պարագայում միանգամայն ավելուդ են լիրիքական զեղումներն այն մարդկանց հասցեյին, վորոնք այնքան մեծ վլասներ են հասցըել հայ ժողովրդին, վորոնք ծառայել են ցարիզմին և իմպերիալիզմին, խարել են բանվորներին և գյուղացիներին և իրենց խելառ գործելակերպով ոժանդակել վողջ Թյուրքահայաստանի ավելին ու մեկ միլիոնից ավելի ժողովրդի կոտորածին:

Ավելորդ են և տարօրինակ «բարեկամական» շամայլ այդ եպիտեաները թեկուզ հենց նրա համար, վոր այդ մակդիրները նվիրում են այն մարդկանց, վորոնք այսոր ել շարունակում են իրենց մշտական խելակորույս քաղաքականությունը: Ա. Ղաղարյանին ես շատ լավ հայտնի յե այն, վոր «անմռունչ» այդ գործիչները մինչեւ այժմ ել զլանում են կատարել իրենց ամենատարրական պարտականությունը՝ ներկայացնել վերջապես վորեւ

մի հաշվետվություն գաղութներից ստացած բազմամիլիոն գումարների և Հայաստանից զալթած հարստությունների մասին:

Միթե՞ Ա. Ղաղարյանն այդ բոլորը չգիտե։ Միթե՞ նա չգիտե, վոր Վրացյանները, Զիլինդարյանները և Արշակունիները նոր ավանտյուրաներ են պատրաստում Սիրիայում և ոգտագործելով անապահով զալթականների ծանր գրությունը՝ նորից «թնդանօթային միա» են պատրաստում իտալական, անգլիական և այլ իմպերիալիստների համար։

Ցեթե այդ բոլորը հայտնի յե նրան (իսկ այդ մասին գրում են իրենք դաշնակներն իրենց թերթերում), ինչու մոռանում են այն, վոր այժմ և հենց այսոր, նա պարտավոր ե ավելի պարզ դիրք զրավել, մի կողմ նետել «անձնական» դիառդությունները, և մի անգամ ընդմիշտ հիշել, վոր ամեն մի ծուռ թեքում կարող ե կորստարեր հետեւանքներ ունենալ հայ ժողովրդի այն բեկորների համար, վորոնք գանվում են Արարիայում, Սիրիայում և արևելյան ուրիշ յերկրներում։

Այդ հարցերը մենք զնում ենք միմիայն նրա համար, վոր արդեն մի քանի անգամ նկատել ենք անտեղի վարանում Ա. Ղաղարյանի և նրա նման մտածող «ամենովեխականների» մոտ։ Ղաղարյանը կարծես իր «գարձը» համարում ե ինչփոք «սայթաքում» և ճնշում ե արդարացնել իր «հավատուրացությունը»։

Թող ուրեմն թույլատրվի մեզ ասելու, վոր անընական այդ գործելակերպը «անհարմար» կացության մեջ և դնում ամենից առաջ հենց իրեն՝ Ա. Ղաղարյանին։ Ավելի ևս համոզվում ենք դրանում, յերբ անցնում ենք Ա. Ղաղարյանի հոգվածի յերկրորդ գլխի քննությանը։ Այդ զլուխը կրում ե շատ բնորոշ մի վերնագիր։ — «Ո՞վ և դավանանը»։

Ա. Ղաղարյանը չափաղանց վիրավորվել ե, վոր դաշնակցականներն իրեն անվանել են «հավատուրաց» և «գավաճան»։ Ցեղ անա փոխարեն քարկոծելու դաշնակիզմի ուղիները, փոխարեն մերկացնելու հայ կապիտալի ռազմական կազմակերպության բեակցիոն բնույթը, նա մի կողմից սահմանափակվում ե «գաշնակ դեկապարների» քննադատությամբ, իսկ մյուս կողմից ել աշխատում ե ամեն կերպ ապացուցել, վոր ինքը մնացել ե «հին դաշնակցական», և վոր իր նոր «գաղափարախոսությունը» մշակել ե դեկապարվելով «հին ուխտի» պահանջներով։

Կանգ առնենք այժմ այդ կողմի վրա։ Այս պարագայում անհրաժեշտ ե հատուկ և վորոշ պարզություն։

Նախ մեկ ցիտատ Ա. Ղաղարյանի հոդվածից. «... ԶԵ վոր իմ բռնած գիծը, ասում ե նա, հայտնի յեր շատ շատերին, Ղաղ- վինում չե՞ վոր իմ տունը ոթեան յեր բոլոր նրանց համար, վո- րոնք Թավրիզից գալիս անցնում եյին արտասահման (թնջ կարիք կա այդ տաելու, պ. Ղաղարյան, ինչնու յեք այնքան կրկնում, մի՞թե չեր ըմբռնում, վոր զավեշտական դրության մեջ եք դնում ձեզ, Ա. Կ.) և յես վոչ միայն չեյի թազցնում այդ մասին, այլև կարդում եյի ձեռագիր գրվածքս (ինչո՞ւ յեք արդարանում, պ. Ա. Ղաղարյան, միթե վատ բան եք կատարել), վոր տպագրեցի «Աղատության ուղին և հայի քաղաքական վարքավիճը» վերատ- ությամբ և ուղարկեցի Դաշնակցության Հ-րդ ընդհանուր ժողո- վի դիվանին, մի ընդարձակ ձեռագիր բացատրականով, վորը հե- տագայում նույնպես տպագրեցի «Մոմենտը պահանջում ե» վեր- տառությամբ:

Այնպես վոր իմ «հավատուրացության» մասին շատերդ գի- տեյիք գեռևս 1923 թվականից: Այդ մասին գիտեն նիկ. Աղբա- լյանը, բժ. Համո Ռիանջանյանը, եսերներ Արշ. Խոնդկարյանը՝ Վահան Միքայուրյանը, Արտակարգ դատարանի անդամ Լեռն Թա- գելույանը, վորին Ղաղվին յեղած ժամանակ, գանգատվել եր տե- ղի զաշնակցության յենթակոմիտեն և ասել թէ՝ «պիտի արգե- լել բժշկին, վոր չտպագրի իր գրքույկը, այլապես պարսկահայ ընկերների վրա քայլայիշ ազդեցություն կունենա», ու յերբ Պապա շան (!!! միանգամայն անտեղի յե այդ ինտիմ տօնը) հե- տաքրքրվեց և կարգացի գրվածքիս վերջին դրուխը, ուր ամփոփ- ված ե իմ «հավատուրացություն» (չակերտների մեջ), նա բա- ռացի ասաց՝ «յես համաձայն եմ հետդ, Արշակ, և բաժանում եմ անձամբ տեսակետդ, բայց դա պիտի կատարվի կուսակցության խողովակով» և այլն (եջ 228): Դա շատ բնորոշ մի խոստովանու- թյուն եւ ինչպես տեսնում ենք, Ա. Ղաղարյանը այլուղ շատ պարզ շեշտում ե, վոր ինքը գործել և վորպես դաշնակցուկան և նույնիսկ ունեցել խոր համոզում, վոր իր նոր ոռւսական որիշեն- տացիան կարող ե ընդունվել դաշնակցության ընդհանուր ժողովի կողմից ևս «... իմ «հավատուրացության» մասին գիտեր նաև ինքը Արշակ Հովհաննիսյանը («անմռումչ» զինվորական նախա- ռարը), ուակայն իմանալով հանգերձ, նա բաժանվեց ինձանից շատ սիրով (!!) ինչպես և մյուսները, նույնիսկ մի քանի սրտա- լից նամակներ ել գրեցին Բեյրութից և այլ վայրերից»... Այդ Արշակ Հովհաննիսյանը իր նամակներից մեկում հիշեցրել եր ի

միջի այլոց այն մասին, վոր «Թաջաղնունուն հալից դցել են»: «Ակնարկը, ասում ե Ա. Ղաղարյանը, պարզ ե, ինձ ևս հալից կողեւն, յեթե համարձակվեմ ձեռագիրս տպագրել... և 10-րդ ընդհանուր ժողովը «ինձ հալից դցեց», իր 30 տարվա ընկերոջը կուսակցության շարքերից վտարեց... և ինչեւ, վորովհետեւ յես հայ ժողովրդի շահերը բարձր դասեցի կուսակցության շահերից, վորովհետեւ յես համարձակություն ունեցա դրելու՝ «վերջնականապես պիտի ընդունենք այն ճշմարտությունը, վոր առանց Ռուսաստանի հայ ժողովուրդը փրկություն չունի» (Եջ 229): Յես չեմ յերկարացնում այլնս:

Բոլոր այդ անորոշ պարբերությունները ստեղծում են խիստ հակասական տպավորություն: Ա. Ղաղարյանը հանդիս ե գալիս մերթ, վորպես Շնորովզած դաշնակցական, մերթ ել վորպես դաշնակցական ուղիների համոզված թշնամի:

Այդ վերջին կողմն ել անհրաժեշտ ե շեշտելու իր հոգվածում Ա. Ղաղարյանը անում ե մի շարք միանգամայն ճիշտ քննական դիտողություններ դաշնակցականների արկածախնդրության մասին: Ճիշտ են մասնակցորապես նրա նկատողությունները վերածնվող նոր Թյուրքիայի մասին, վորի հետ Խորհրդային Հայաստանը կապված ե ամենասերտ միտությամբ Ռւշադրավ են նաև այն ակնարկները, վոր մի քիչ թուոցիկ կերպով անում ե Ա. Ղաղարյանը քրդական շարժման և դաշնակների պըռդասիրության» մասին:

Ինչպես հայտնի լե, քյուրդ ապստամբների ճնշման առթիվ Դաշնակցությունը առանձին բողոքագիր ե ներկայացրել Յերկորդ ինստերնացիոնալին:

Յեզ այդ, չնայած նրան, վոր քրդական ապստամբությունն իրավես յեղել ե հակած եղափոխական շարժում, վորը հրահրվել ե և կազմակերպվել ե անդիմական իմպերիալիստների ջանքերով:

Թյուրքների յելույթը—Թյուրքիայի Վանդեան ե, ավատական այն Վանդեան, վորը ծառանալով նոր Թյուրքիայի դեմ, նպատակ ե ունեցել վերահաստատել հին սուլթանական կարգերը: Յեզ ամեններն պատահական յերկույթ չե այն, վոր միջաղղային բուրժուազիային ծառալի ծառալու հառաջող հայ բուրժուազիայի մարտական կազմակերպությունը միացել ե հականեղափոխական Վանդեային, և անհրաժեշտ է համարել այս անդամ ել աջակցել միջաղղային ռեակցիային:

Կասկածից դուրս ե այն, վոր նոր Թյուրքիայի վճռական

գործելակերպը քրդական ազստամբության, խալիֆաթի կողմնակիցների և Խտահատի հականեղափոխական վարիչների նկատմամբ ավելորդ հարգածներ են—ուղղված անդլիական իմայերի հաղմի դեմ, վորը յեղել և հականեղափոխական ուժերի խոկական կաղմակերպիչը:

Այդ բանը, կարծիս, նկատում ե և Ա. Ղազարյանը: Դա լավ է: Թեև պետք ե ասել, վոր այդ բոլորն այնքան պարզ և ակնհրես, վոր հարկավոր և չափազանց կույր կամ ծայրահեղորնեն անբարեխիցն լինել հակառակը պնդելու համար:

Եթե Ա. Ղազարյանը կանգ առներ այդտեղ—դուցե և մենք ևս կանգ չեյինք առնիւ այնքան յերկար նրա հողվածի վրա:

Բայց այդպիս չե վարդում նա: Նորից իր հողվածի վերջում, Ա. Ղազարյանը կրկնում ե առաջլաւ նման իր խոները «հին դատի» և «հին դաշնակցականների» մասին: Յեվ ահա հենց այդ բանն ել սանդում և այնպիսի տպավորություն, կարծիս նա ըննապատռվյան և յենթարկում վոչ թե «ռազմական նացիոնալիզմի», դաշնակիզմի, հայկական սիոնիզմի ուղին, այլ միմիայն դաշնակցության այսորվա մի քանի զործիչներին և զեկավարներին:

...«Նման խառնաշփոթ միտք ունեցողները, կարգում ենք Ա. Ղազարյանի մոտ, վորպիսիք են դաշնակ դեկավարները, լավ կանեն, վոր քաղաքական ասպարեզը թողնեն ու քաշվեն մեկի և զուր տեղը չվարկաբեկեն ՅՈ տարվա անցյալ ունեցող մի կուսակցություն, վոր հայ հասարակական զարգացման պատմության մեջ իր պատվավոր տեղն ունի Դադարեցեցիք, պարոններ, մրոտել ու վոչնչի հավասարեցնել գեթ Սիմոնի ու Ռոստոմի հիշատակը, վոր վհչ միայն հայ, այլև ուռսական հեղափոխական դեմքերի մեջ առանձնահատուկ են» (եջ 257): Այստեղ արդեն ամեն ինչ ասված և ավելի լրիվ կերպով: Այժմ մեր համար հասկանալի յեն դառնում Ա. Ղազարյանի անուղղակի ակնարկները «հայ դատի», «հին դատի», «հին ուխտի» մասին, նրա ջանքերը, համողելու դաշնակցականներին, նրա վերաբերմունքը դեպի Դաշնակցության մռայլ անցյալը, օրիվ այդ մտքերն, անորոշ և հակառական թեքութներն ի վերջո պատահական «Ծոփիչներ» չեն, այլ մի ընդհանուր հասարակահայեցողության առանձին բը:

Դա միննույն իմաստասիրությունն ե, վոր արտահայտել և իր ժամանակ ավելի մեծ թափով Քաջազնունին, և վորը շատ

չնչին տարբերություններով պաշտպանում են նաև մի շարք ռամկավար հրապարակախոսներ:

Դա—նայ բուրժուական մտավորականության մեկ վորոշատվածի «նորագույն կուրսն» եւ:

«Խորհրդային Հայաստանը» այդ հատվածի հետեւղների կողմից քննվում եւ, վորպես «հայկական անկախության կորիզ», ժամանակավոր մի իջևան», «աղքի հավաքմանը» նպաստող կարեռը մի ազդակ, վորը կարող ե այս կամ այն չափով նպաստել «հինգ ատի» վերջնական լուծմանը:

Կան շերտեր հայկական այդ «սմենովեխականների մեջ, վորոնք ավելի հեռուն գնալով՝ կտրուկ կերպով պահանջում են, վորժամանակավոր այդ «իջևանը», ավելի վորոշ կերպով ոժանդակե «հայության հավաքման» և «հայկական պետության տերրիտորական ամբողջության» իրականացման գործին: Իսկ իրենց կողմնակիցներինդրանք խորուրդ են տալիս մի կերպ «յոլա տանել» մեծամասնականներին ետ, մինչև այն մոմենտը, յերբ «քաղաքական հանգամանքների» փոխվելուն պես հայ ազգային մտավորականությանը հնարավորություն կտրվի նորից քարոզել իր հին յերգը, «վեցվիլայեթների» մասին:

Այդ հոսանքի ներկայացուցիչներն ամեն կերպ ձիգ են անում նախ՝ իրենց տեսակետով լուսաբանել Խորհրդային Հայաստանի շինարարությունը, և ապա մյուս կողմէց ել—համակերպվել հմուտ կերպով իրերի ընթացքին և նոր հենակետներ ստեղծել նացիոնալիզմի պահպանման և վերածնունդի համար: Բավական ե միայն թերթել ուշադիր կերպով Արշակ Չոպանյանի, Դավիթ Անանունի, Արտակ Դարբինյանի, Թաջազնունու և ուրիշ նման հրապարակագիրների հողվածները և նացիոնալիստական այդ «նոր կուրսի» պատկերն ավելի քան պարզ կերպով կնկարագծվի:

Անհրաժեշտ ե շիշտել այստեղ, վոր մտավորական այդ խըմբակներից բացի կան ուրիշ շերտեր եւ, վորոնք ուժեղ են առանձնապես Խորհրդային Հայաստանում:

Մեր խոսքն առաջավոր մտավորականության այն գունդերի մասին ե, վորոնց խորհրդային իշխանության հիմնադրության առաջին որերից լծվել են շինարարական աշխատանքներին և մեծապույն յեռանդով ու տոկունությամբ մեծամասնական շարքերի հետ միասին մղում են այսոր ևս աշխատանքի պայքարը տնտեսական և կուլտուրական ճակատում:

Դա—նոր, խորհրդային մտավորականությունն ե, վորի ի-

բական արժեքը պայմանավորվում ե հենց նրանով, վոր իր աշխատանքը նա վարում ե բանվորների և գյուղացիների կողքին, և նրանց հետ միասին:

Նոր այդ մտավորականության ներկայացուցիչները մի անգամ ընդմիշտ խաչ են գրել արյունու հին ուղիների, ազգայնական բոմանտիզմի և գաղնակցական ավանայուրիզմի վրա—և միմիայն խորհրդային իշխանության ամբացման հետ են կապում Խորհրդային Հայաստանի աշխատավորության տնտեսական և կուլտուրական վերելքը: Ահա ինչու արտասահմանյան այն մտավորականները, վորոնք համարում են իրենց «Խորհրդային Հայաստան»-ի բարեկամներ, ամենից առաջ պետք ե հրաժարվեն նացիոնալիզմի քայլարկած զգեստները կարկատող մարդկանց քաղաքականությունից:

Ա. Դազգարյանի շեշտված թերությունները և հակասությունները բացատրվում են հենց նրանով, վոր նա անդադար զեղերում և տատանվում ե վերոհիշյալ մտավորական յիրկու հատվածների մեջ: Մը թ հակվում ե զեպի օրին դատիք կողմանակիցների բանակը և ճգնում ե այսորվա աշխատանքը շաղկապիլ յերեկվա իղեալների—«ին ուբարի» հետ, մերթ անցնում ե վորոշակի խորհրդային իշխանության կողմը առանց վորեն «նախապայմաններ» ներկայացնելու: Այդպիսի կացության մեջ են գտրնավում, անշուշտ, ամեննովիխական այն գործիչներն ևս, վորոնք հրաժարվել են դաշնակիզմից, բայց մինչև այժմ չեն վստահացել կամ չեն կարողացել թոթափել իրենց ուսերից ազգայնական տրագիֆոն մտածողության կաշկանդիչ լուծը:

Մենք կարող ենքնք կանգ չառնել այդքան շատ այդ բոլորի վրա, յեթե միայն «նոր գիրքերի» եշտված ասպետները փորձ չանելին ըրենց առանձնահատուկ ակնոցներով լուսաբանել Խորհրդային Հայաստանի շինարարությունը:

«Դիվանագիտությունը» ներկա պարագայում և ավելորդ ե, և մասսակար:

Խորհրդային Հայաստանի կտռավարությունը ստեղծել ե ամեն հնարավորություն թե առանձին մասնադիտների, և թե առաջավոր այն մտավորականության համար, վորը ամուր կերպով կտուչել ե սոցիալիստական շինարարության գործիչներին:

Սակայն այն որից, և այն չափով—վորքան այդ մտավորականության առանձ ձին դեմքերը ճիգ են անում առաջադրելու իրենց ուրույն գաղափարախոսությունը և հակադրելով իրենց

«Հաստրակական-քաղաքական» դիմը՝ մեր կուրսին—ցանկանում են «նոր դիրքեր» ստեղծել հայկական նացիոնալիզմի «հին դիրքերի» ամրացման համար—մենք անհրաժեշտ են համարում որ առաջ մերկացնել անփոփող ու վոտքի յելնող բուրժուական մտքի այդ տեխնչերը:

«Հին դատը», «հայ դատը», «Դաշնակցության 35-ամյա պրակտիկան»—իրապես յեղել և հայ բուրժուազիայի «դատն» ու գործը, այն բուրժուազիայի, վորը ցանկացել և կազմակերպել իր սեփական «հզոր հայրենիքը», ստեղծել բուրժուակապիտալիստական պետություն, կեզծ գեմոկրատական աղքայնական պետություն—համապատասխան բոլոր ատրիբուաներով, ճիշտ այնպես, ինչպես նույնն են ցանկացել անել թյուրք աղքայնականները, վրացական աղքայնականները, ոռւս աղքայնականներն և այլն և այլն:

Ռուսական նացիոնալիստների ռազմային դատը» յեղել և—մեծ, միացալ Ռուսաստան, բռնապետական Ռուսաստան, բանգորների և գլուղացիների շահագործման և մանր աղքությունների գերության վրա խարուխված «աղքային պետություն»:

Թյուրք աղքայնականների դատն յեղել և—սեփական «հզոր» նացիոնալիստական պետության կազմակերպումը «Աղքային» այդ պետությունն ևս պետք և «Հայնանար» և «Հզորանար» ի հաշիվ մյուս աղքություններին, նոշման և շահագործման միջոցով վրացական աղքայնականների «աղքային դատը» կրել և միենույն բնույթը:

Այդ ուղիով են ընթացել յերկրագնդի բոլոր աղքայնականները, վարովնեան բոլորն ել յենելով իշխող զասակարգի շահերից, վարել են իրենց սիփական «աղքային» դատը և հանուն այդ «դատի» միշտ և անընդհատ աղքային կոփաներ են մղել միմյանց դեմ:

Յեկավելի մեծ հաջողությամբ առաջ տանելու համար այդ գործը, ավելի մեծ ուժով խարելու համար իրենց մասսաներին, բոլոր այդ նացիոնալիստները շղարշել են տիրող բուրժուական և կալվածատիրական տարրերի բաղձանքները ընդհանուր խոռոքերով «ղեմոկրատիայի», «աղք»-ի և «հայրենիք»-ի մասին: Ապագասակարգային և «համաղքային» բնույթ տալով իրենց բացորոշ դասակարգային գործիւակերպին՝ աղքայնական հոսանքները թմրացրել են բանվորներին և գյուղացիներին «հայրենասիրություն» կոչվող հաշիշի թույնով, և պրովակա-

ցիոն ազգայնական ագիտացիայի միջոցով մղել են ժողովուրդ՝ ժողովրդի դեմ, ազգություն՝ ազգության դեմ, բոլոր աշխատավորներին միմյանց դեմ։ Այդպես և յեղել և հայ նացիոնալիզմի գործը, վորի ամենահետեւղական «վարպետը»—Դաշնակցությունը 35 տարի շարունակ քայլել և միենույն կորսարեր ուղիներով։ Յեվ այդ արյունու ու մահարեր ուղնե հենց, վոր ավելի յե մասնել թյուրքահայ և ոռուսահայ նահանգների աշխատավոր բնակչությանը Այդ ուղին և տարել միլիոնից ավելի թյուրքահայ աշխատավորներին դեպի մահվան անդունդը։

Այդ ուղինց հրաժարվել են միանգամ ընդ միշտ Խորհրդային Հայաստանի բանվորներն ու զյուղացիները։

«Ազգային» դատից հրաժարվել են Խորհրդային Հայաստանի բոլոր աշխատավորները։ Յեվ իրենց հեղափոխական ապատամբությամբ ընդդեմ «հին դատի» զեկավարների, իրենց հետևողական պայքարով ռազմական հայ նացիոնալիզմի դեմ և համայնական սոցիալիստական շինարարությամբ Հայաստանի բանվորներն ու զյուղացիներն ասել են արդեն իրենց վերջնական խոսքը։

«Հին դատին» և «հին ուխտին» նրանք հակադրել են վճռական կերպով իրենց «նոր ուղին»—բանվորների և զյուղացիների միասնական հառաջամարտի ուղին, սոցիալիզմի և ժողովուրդների միջազգայնական համաշխատակցության հեղափոխական ուղին։

ՌՈՒԲԵՆ ՓԱՇԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ «ԲԱՐԵԿԱՄԻ» ԴԵՐՈՒՄ

Ռուբեն փաշան մեկն և դաշնակցական կուսակցության այն ներկայացուցիչներից, վորը գեռ մոտակա անցյալում հայանի յեղել, վորպես ամենավայրագ նացիոնալիզմի յերգասաց:

Ավելի և ապօրինակ ե, հենց դրա համար ել, մառվերիզմի հինավուրց այդ մունետիկին տեսնել «խաղաղասիրության» ավետաբերի դերում:

Յեվ սակայն այդ այդպես եւ:

Արտասահմանում, վորքան ել այդ զարմանալի չե, Ռուբեն փաշան համարվում և ներկայումս «արևելյան ժողովուրդների բարեկամ»: Նրա շուրջն են խմբվել նաև բոլոր այն դաշնակցական գործիչները, վորոնք նրա հետ միասին հանդիսանում են քաղաքական նոր որիյենտացիայի հետևողներ:

Մենք դիտավորությամբ այդ խոսքերը դնում ենք չակերտների մեջ, վորովհետև իրականում այդ Շնոր որիյենտացիան»—պետք և ասել. շատ քիչ և ատրբերվում դաշնակցական կուսակցության տրադիցիոն քաղաքականությունից:

Բավական ե միայն թերթել Ռուբեն-փաշայի վերջին աշխատություններից մեկը («Հայ-թյուրքական կնճիռը»), Վորպեսով պարզ լինի այն, վոր ինչպես միշտ, այս անդամ ել Շնոր որիյենտացիան» հին քաղաքականության մի փոքր կոկված, մի փոքր կարկատած և շտկված զգեստավորութիւն եւ:

Բայց և այնպես այն ել հետաքրքրական եւ Հետաքրքրական ե, վորովհետև հնարավորություն և տալիս մեղ նշմարել դաշնակցական շարքերում սկսված ակնհայտնի հուսալքումը: Ռուբեն փաշայի գիրքը այդ տեսակետից խիստ հատկանշական սոցիալ-հոգեբանական դոկումենտ եւ:

Գրքին կցված ե դաշնակցական հրապարակագիր վ., Նավասարդյանի առաջարանը:

«Վարժվենք, առում ե այդտեղ Նավասարդյանը, մեր սիրալուսկագագոխել ուղեղի մեջ և վոչթեռուղեղը ուահել մեր սրառում, ինչպես կաներ ամեն մի զողամիտ քաղաքական գործիչ, Բավական ե վորքան հույսուհեր ու ցնորքներ ցանեցինք և փոխարենը զոհեր հնաձեցինք: Տուժեցինք մենք յերկուսունել և շահեցին մեր փոխարեն ու մեր հաշվին ուրիշները: Միթե ժամանակը չե, վոր այլես հարցերին չապավինենք, փորձենք լինել իրատես, շրջահայաց ու զգաստ, լայնախոհ ու հեռատեսութեամբ»:

Ապա ընդդեկով այն, վոր «ես ուղղությամբ ու հեռատեսությամբ վաստակված հաղթանակը» ամենաարժեքավոր զործն, մեր «իսելուքացած» նացիոնալիստը հույս և հայտնում, վոր Ռուբենի զիրքը պիտի լինի «Ճիթենու մի համեստ ճյուղ»...

Ինչպես տեսնում ենք, մի փոքր առաջգական, բայց և այնպիս բավական հասկանալի լեզվով վ.: Նավասարդյանը մերկացնում է և Ռուբենի իսկական մտադրությունները:

Նույնն ե ցույց տալիս և գրքի բովանդակությունը, վոր բավական ստվար հատոր ե, բաղկացած 158 էջից:

Վաղջ գիրքը կազմված ե բավական հետաքրքրական ձևով: Ընթերցողի համար համենայն դեպս բավական պարզ ե դառնում այն, վոր իր գրքի հրատարակությամբ Ռուբենը ցանկանում ե արդարացնել Դաշնակցությունը, և ապացուցել հայերի և թյուրքերի բարձրակամության հնարավորությունը և անհրաժեշտությունը:

Եաւ ընորոշ ե այդ կողմից մառկերական «տեսաբանիք» վողջ արգումենտացիան: Կեղծիքի և փարիսեցիական հայտարարությունների յուրորինակ խառնուրդ ե դա, վոր վերջին հաշվով նպաստում ե դաշնակցական մտայնության կատարյալ ջախշախմանը:

Կանդ առնենք այդ արգումենտացիայի հիմնական ողակներից մի քանիսի վրա: Արդարանալու համար Ռուբեն-փաշան ամենից առաջ աշխատում ե համոզել, վոր հայկական շարժումը

գործիք չե յեղել արևմտյան պետությունների ձեռքին, այլ հանդիսացել ե սոսկ հին սուլթանատի դեմ բազմաթիվ շարժումներից մեկը:

Նա, ով ծանոթ ե դաշնակցական պրակտիկային, շատ լավ գիտե, ի հարկե, վոր ուշացած այդ հայտարարությունը այնքան ել չի համապատասխանում իրականությանը: Դաշնակցական շարժման գեկավարները իրենց ձեռնարկությունների ապագան միշտ կապել են կապիտալիստական Արևմուտքի հաղթանակի և թյուրքական պետության անդամահատման հետ: Իզուր և Ռուբեն-փաղան, այժմ, 40 տարի անց, խեղաթյուրում պատմական ճշմարտությունները: Յեղածը՝ անցել ե ի հարկե: Բայց անցած լինելով անդամ նա արձանագրվել ե և թողել իր ակնհայտնի հետքերը:

Այլ ինսդիր ե այն, վոր Թյուրքիայում յեղել են իհարկե հայ ժողովրդական այնպիսի շարժումներ, վորոնք կապված չեն յեղել անմիջապես կապիտալիստական դիվանագիտության հետ: Յեղել են անշուշտ: Վորջ ինսդիրը հենց նրանումն ե, վոր դաշնակիզմի կամ հնչակիզմի հետ կապված շարժումները միշտ ել յեղել են կապիտալիստական դիվանագիտության «արևելյան քաղաքականության» նպաստող ազգակներ: Այսինչ, նույնը չի կարելի ասել ժողովրդական կամ հասարակական այն շարժումների մասին, վորոնք բռնկվել ե կազմակերպվել են բռնն Թյուրքիայում—տեղական տարրերի ձեռներեցությամբ: Թյուրքահայերի պատմագիրներից, պ.պ. Գերպերյան, Փափազյան, Ալպյոյանյան կանդ հն առել բավական մանրամասն այդորինակ շարժումների վրա: Այդ շարժումները նույնպես ստեղծել են բեղործության և հալածանքների Բայց դաշնակցական կամ հնչակյան շարժումների հանդեպ Թյուրքիայի կառավարության քաղաքականությունը մի փոքր տարրեր եր: Դա—պատերը ազ են ազ մ եր, ազ գ այն ական պատեր ազմ, կապիտալիստական Արևմուտքի ին սպասավորությունը և ապամասնական նպատակի նկատմամբ հին Թյուրքիան բռնել եր միանդամայն վորոշ ուղիւ: Նա աշխատում եր հայերի, ասորիների Քիղիքական բնաջնջման միջոցով ապահովել Թյուրքիան յեղուսպական դիվանագետների միջամտությունից, և մի անդամ ընդմիշտ վերջ տալ «արևելյան հարցին»:

Իր գրքի մեջ Ռուբեն-փաղան ահա շփոթում և ամենից առաջ հենց այդ նորագույն (80—88-ից հետո) շարժումները

անցյալի հասարակական - ժողովրդական շարժումների հետ:

Յերկրորդ «սխալը», վոր անում և նա նույնպես զիտավորյալ կերպով, կայանում և նրանում, վոր զաշնակցական շարժումները նա համեմատում և Թյուրքիայի սահմանների մեջ առաջացած իսլամ ժողովուրդների հետ:

Դարձյալ մենք պետք և հիշեցնենք այն, վոր վերջին շարժումները սոցիալական այնպիսի բռնկումներ եյլն, վորոնք նպատակ չեյին գրել իրենց իմպերիալիզմի միջոցով քանդել կամ անդամանատել Թյուրքիան:

Այդ շատ լավ է, ինարկե, վոր այսուր մառակերական գաղափարախոսության հրապարակախոսը արձանադրում և այդորինակ շարժումների գոյությունը և նույնիսկ այնքան հետուն եղնում, վոր ցանկանում և ինչ վոր նմանություն տեսնել «իսլամ ժողովուրդների» և հայկական (կարգա—«դաշնակցական», վորով հետեւ այդ ի նկատի ունի մեր հեղինակը) շարժումների մեջ:

«Հիշատակելով մի այն մեծ շարժումն երը և այդ շարժումների վոչ թե կրկնությունները, այլ միայն նրանց սկզբնավորությունները, պիտի տեսնենք, վոր 19-րդ դարի ընթացքին Թյուրքիոս սահմանների մեջ ապրող ժողովուրդներից ապստամբ վիճակի մեջ յեղած են 17 ժողովուրդներ, վորոնցից յոթը՝ իսլամ... յեթե նկատի առնենք ապստամբ ժողովուրդների թվական մեծությունը, պիտի տեսնենք, վոր քրիստոնյաները այս տեսակետից բանում են շատ համեստ տեղերից մեկը... ըստ յերկրի տարածության, իսլամները, ինարկե, անհամեմատ շատ ամենի մեծ տեղ են բռնում»^{*)})...

Մուլեն-փաշայի փաստաբանությունը շատ պարզ է:

Նա ցանկանում է արդարացնել զաշնակցականներին և դրա համար ել գիմուլմ և «համեմատական մեթոդի» ողնությանը:

— «Դուք, ասում են նա թյուրքերին, մեղադրում եք մեզ, Բայց չե՞ վոր «Թյուրքիո վարչության և խալիֆայի գևմ ամենից առաջ և ամենից շատ և ուժեղ կերպով ապստամբած են ամենամոլուանդ՝ իսլամները»: Ինչու դուք ձեր անբավականությունը ուղղում եք միմիայն հայերի և քրիստոնյաների գեմ: Չե՞ վոր «շարժումների պատճառներն ու առիթները միայն կրոնական հակածարտությունները չեյին: Դժգոհության զլիտավոր ազյուրը ինքը թյուրք վարչությունն եր, իր պիտական, աղքային և տընտեսական հոռի քաղաքականությամբ»^{**)}): Ուշադիր ընթերցողը

^{*)} Ռուբեն «Հայ-թքաքական կնճիռը». Գահերե. 1924 թ., եջ 20—21.

^{**) Նույն տեղ. եջ. 22:}

կարող ե անշուշտ նկատել նորաձև այդ փաստարանության մեջ մի շարք «նորություններ»:

Առաջին «նորությունը» հենց այն ե, վոր ինչպես շեշտեցինք, դաշնակցական հրապարակագիրը՝ հակառակ դաշնակցական ընդհանուր մտայնության՝ կարողանում ե հասկանալ վոր Թյուրքիայում յեղել են նաև «իսլամ ժողովրդի» շարժումներ, և վոր հեղափոխական այդ շարժումները անհամեմատ ավելի ուժեղ են յեղել քան քրիստոնյաների շարժումները:

Յերկրորդ «նորությունը» այն ե, վոր դաշնակցական մեր տեսարանը հասկանում ե վերջապես այն, վոր «շարժումների պատճառներն ու առիթները միայն կրոնական հակամարտությունները չելին»:

Մատերիալիստ-պատմագիրների համար այդ ամենը յերբեք «նորություն» չի լեղել «Նորություն» և միայն նացիոնալիստների համար: Մինչև 1920 թիվը—դաշնակցությունը կանգնած է յեղել ուստի ականությունը կանգնած է յեղել ուստի ական կը ունական տեսակետի վրա: 40 տարի շրջունակ հայկական դաշնակիզմը չի կարողացել և չի ցանկացել նշմարել ուրիշ հեղափոխական տարրեր Թյուրքիայի սահմանների մեջ, 40 տարի շարունակ նա վաղել և նեղ նացիոնալիստական քաղաքականություն, և միանգամայն անհնարին համարել ձեռնարկել վորեն քայլեր հայ և թյուրք հեղափոխական տարրերի մերձեցման ուղղությունը:

Դեռ ավելին ևս նա «թյուրք» ցեղը համարել ե «ընկնող», «քայլայվող» և «մեռնող» ցեղ: Նա—թյուրքիայի մահացման և անդամահատման հետ ե կապել հայ ժողովրդի ազատազրումը: Բավական ե միայն նորից թերթել Արծրունու հայտնի գրքույկը մի կողմից (Թյուրքահայերի տնտեսական դրությունը) և ապա Միքը. Վարանդյանի նույնքան հայտնի «Կովկասյան Վանդեան» մյուս կողմից—վորպեսզի ակնհայտնի լինի Ռուբեն-փոշայի անսպասիլի թոփչքի քաղաքական արժեքը:

Յերեկ—արտասովոր ապլոմը և մեծամտություն:

Այսոր՝ «ձիթենիի ճյուղ», և «հեռատեսության» իմաստասիրություն:

Յերեկ—հայերն ելին համարվում «երոստկան կուլտուրայի» իսկական մունեսաիկները «վայրենի» Թյուրքիայում—և «դաշնակցական շարժման» հետ եր կապվում Թյուրքիայի «վերաճնությունը»:

Այսոր մենք լսում ենք, վոր միենույն հայերի կողքին յեղել են պայքարող թյուրքեր, հեղափոխական թյուրքեր, և վոր թյուրք ժողովրդի այդ շարժումները ավելի լայն և ուժեղ են յեղել, քան դաշնակցական շարժումները: Յեզ իրավունք ունի, իհարկե միամիտ ընթերցողը հարց տալ այնքան սենսացիոն թոփչք կատարող Ռուբեն-փաշաներին՝

— Յեմե այդ ամենը հայտնի յեր ձեզ, թնջու գուք 40 տարի շարունակ քարողել եք թրավայցություն, շովինիստական առելություն թյուրք ժողովրդի նկատմամբ, ինչու գուք վոչ մի միջոց չեք ձեռնարկել միասնական ընթացք տալ հեղափոխական շարժումներին, ինչու վերջապես մեկուսացած և առանձնացած եք վարել «հայ հեղափոխական պայքարը» և յերբեք չեք խորհել այն մասին, վոր ընդհանուր շարժումները կարող եյին տալ թե ավելի արդյունավետ եֆեկտ, և թե անհամեմատ ավելի թույլ հարվածներ հայ աշխատավորական զանդվածներին:

Մենք այնքան միամիտ չենք, վոր սպասենք քիչ շատե պարզորդ պատասխան այդ հարցերին:

Մեր առաջն և անցյալի մոռայլ պատմությունը, մեր առաջն և հայ մարտական նացիոնալիզմի 40 տարիների արյունոտ «թերիան և պրակտիկան»:

Յերեկվա այդ վակերագրերը այսոր ել չեն մոռացվել:

Ավելի քան ակներև ե, վոր Ռուբեն-փաշայի այսորվա Շպատմական» եքսկուրսիան դեպի «հեղափոխական շարժումների» պատմության անդամանը լոկ զիվանագիտական մի զիվերսիա յե, վորով հայ բուրժուազիայի կուսակցության ալդ ներկայացուցիչը ցանկանում ե մշուշել իտանձր մառախողով անցյալը և ծածկված այդ վարագուրով նորից հավաքել գաշնակիզմի քայլքայվող շարքերը:

Ավելի ես պարզվում ե մեզ համար այդ բոլորը, յերբ անցնում ենք Ռուբեն-փաշայի զրքի այն եղերին, ուր նա նկարագրում ե՝ Դաշնակցության վարչադիմը իմպերիալիստական պատերազմի որերին և «կամավորական խմբերի» չափազանց արդեն հայտնի պատմությանը:

II

Յես ասում եմ—«Հայիազանց արդեն հայտնի պատմությունը», բայց յերբ սկսում ենք կարդալ Ռուբեն-փաշայի գիրքը,

մի ակնթարթ արտասովոր տարակուսանք և համակում մեզ:

«Կամավորական խմբերի» պատմության մասին ներկայում մենք ունենք բավականին սովար գըականություն և ավելի քան ընորոշ վավերագրեր:

Դա—ամենից առաջ 1914—1916-ի վողջ պարբերական մամուլն ե, թե կովկասանայ, թե ուստական և թե արտասահմանյան:

Այդ բոլորին կարելի յե ավելացնել «Աղդային Համախորհրի» և զանազան «Աղջային Բյուրոների» պաշտոնական գրությունները և վավերագրերը:

Ապա զբանից հետո գալիս ե մեմուրային այն գրականությունը, վոր 1921-ից հետո լույս ե տեսել արտասահմանում—Անդրանիկի որագրությունը, Սեպոհի «Հուշերը», Արամի և դաշնակցական ու վոչ դաշնակցական զանազան «Գործիչների» բավական մանրակրկիս մեմուրաները: Այդ նյութերից մեծ մասը տպվել ե դաշնակցական «Հայրենիք» ամսագրի եջերում: Նյութերի մեջ առանձին տեղ են գրավում ի միջի այլոց գեներալ Կարգանովի մեմուրաները, վորոնք տալիս են ռազմական պատրաստությունների և գործողությունների բավական հետաքրքրական պատկերը: Վերջապես մեր ձեռքի տակ են լուսանկարներ, կամավորական շարժման մասնակցողների ալբոմներ, կամավորական զնդերի դեկարտների հայտարարությունները, կոչերը...

Այդ բոլոր նյութերը միարերան հաստատում և ապացուցում են այն, վոր կամավորական շարժումը կաղմակերպվել և Դաշնակցության ջանքերով, և վոր Դաշնակցությունն և յեղել սկզբից մինչեւ վերջ կամավորական խմբերի գործնեյությունը դեկարտարող կենդրուական շատարը:

Նույնչափ անվիճելի և ակնհայտնի յե նաև այն, վոր դեռ իմպերիալիստական պատերազմի նախորյակին Դաշնակցությունն և յեղել կենտրոնական այն կազմակերպությունը, վոր պաշտպանել և Թյուրքիային պատերազմ հայտարարելու անհրաժեշտությունը և իր զանազան ներկայացուցիչների միջոցով—Պոլսում դՊետերբուրգում—առաջադրել ե այդ խնդիրը ցարական կառավարության լիազոր ներկայացուցիչների մոտ: Մենք ունենք յերկու խիստ հետաքրքրական ժողովածուներ—մեկը, ցարական կառավարության որերին հրատարակված «Նարնջազուկն գիրքն ե», իսկ մյուսը՝ յերեք տարի առաջ Մոսկվայում լույս տեսած «Թյուրքիայի բաժանումը» վերնագրով ժողովածուն: Այդ յերկու ժողովածուների մեջ զետեղված են մի շաբթ վավերագրեր, վորոնք ա-

վելի քան վորոշ կերպով ցուցադրում են, վոր Դաշնակցությունը և դաշնակցականները յեղել են սուս-թյուրքական պատերազմի խիստ ակտիվ մունխտիկները:

Կրկնում ենք: Այդ ամենը այնքան ակներեւ ե, վոր մինչև վերջին որերը չի ժխտվել յերբեք վոչ մեկ դաշնակցականի կողմէց:

Բայց Ռուբեն-փաշան աշխատում ե վորնե կերպ «համաձայնության» յեղը մշակել: Նա զիտե, վոր դաշնակիզմի ամենավիրավոր կողմէ հենց այդ գործակցությունն ե իմպերիալիստական պետությունների կողմից սկսված ռազմական ձեռնարկություններին, և դրա համար ել աշխատում ե վորն ե կերպ բացատրել «անցյալի դեպքերն» ու արդարացնել իրեն ու իր ընկերակիցներին:

Նրա «փաստաբանությունը» այնքան բնորոշ ե, վոր՝ արժեքարա վրա ևս կանգ առնել մի փոքր ավելի յերկար: Ռուբեն-փաշայի նոր հայտարարություններն այնքան հետաքրքրական են, վոր ընթերցողը չի բողոքի մի քիչ ավելի յերկար ցիտատի համար:

«Ոգոստոսին, կարգում ենք Ռուբեն-փաշայի մոտ,—արդեն պարզ եր իթթիհատի փորչումը պատերազմի մասին: Ոգոստոսին իթթիհատը արդեն գործում եր և գոչ միայն խոսում: Այդ ժամանակ եր, վոր Դաշնակցության հետ բանակցություններ վարող թյուրք գործիչները, բերելով իրենց հետ քարոզիչների մի ամբողջ շքախումբ, սեպատեմբերին յերեց ուղղությամբ և միանամայն փորչակի հրանանդներով մացրին Ռուսաստան: Այդ քարոզիչներից մեկ խոմք Ոլթիկ գծով անցավ Աջառիա, մյուս խոմքը՝ Ալազկերտի վրայով մտավ Բագու և Դազստան, իսկ յերրողքը՝ Վանի և Մակուկ գծով Պարսկաստան անցավ: Անշառաւա, ի ըստ ան ի մեջ քեն դի (ալ ե թ ս ա ն դ ը ր ա պ ո լ ց ի) չի ժխտ ի այս փաստը վոր ովհետեւ և մասնավոր աբար մեր գիտությամբ իր հայրենիքն անցավ»...)

Դա շատ հետաքրքրական հայտարարություն ե, վոր ավելուրդ անգամ հաստատում ե վոչ թե դաշնակցականների «լոյալությունը» Թյուրքիայի հանդեպ, այլ միայն այն, վոր բուն Թյուրքիայում գործող դաշնակցականները հակառակ իրենց կամնցողության ստիպված եյին հաշվի առնել տեղական բնակչության—թյուրքահայ բնակչության տրամադրությունները և ըստ այնու լինել ավելի «նրբանկատ» Թյուրքիայի նկատմամբ: Թե վորքան ուժեղ եր այդ հարաբերությունը մենք տեղեկանում ենք այժմ Ռուբեն-փաշայի հետաքրքրական նկարագրությունից:

*) Ռուբեն «Հայ-թրքական կնճիռը».

Ոգտագործելով այդ փաստը, Ռուբեն-փաշան աշխատում և ապացուցել, վոր Դաշնակցությունը առնասարակ յեղել և պատերազմի հակառակորդ:

... «Դաշնակցությունը, տառամ նա, դեմ լինելով պատերազմին և զեմ լինելով իթթիհատի կառավարության քաղաքականության, այնուամենայնիվ վորոշում և նորգորել հայ ժողովրդին՝ կովի գեղեցում անթերի կերպով իր պարտականությունները կատարել Թյուրքիյո հանդեպ: Ենք այդ մասին նա նախապես հայտնում են Բեհանտապին-Շաքրիներին...»

Ռուբենի գուրս և գալիս, վոր Դաշնակցությունը վոչ միայն հակառակ յեղել պատերազմին, այլ նաև ցանկացել և «աղնիվ կերպով» (Ռուբեն-փաշայի խոսքերը) ոժանդակել Թյուրքիային:

Ընթերցողը նկատում է անշուշտ դաշնակցական խմբապետի կեղծավոր տոնություններից: Անցնենք—և հետեւնք Դաշնակցության և կառավարության դիվանագիտական բանակցություններին:

... «Երզը մեջ, պատմում են Ռուբենը, պարզ ու հստակ ձեռվ նրանք մեզ հետեւյան եյին հայտնում.

Խնչպես թյուրքերը, նույնպես և հայերը պատերազմի հետեանքով ստեղծված բացառիկ հանգամանքների շնորհիվ, իրավունք ունեն աղքային իրենց գերագույն նպատակներին հասնելու: Պետք ես ստեղծեմ, Հայուստան, կենարուն ունենալով նշնչածինը Հայուստանի մեջ պետք եմ տնեն ոռուական Հայուստանի հայկական մասերը, դրան պետք ե կցել Տաճկահայաստանից Երզում նահնադի վորոշ մասերը, առանց Երզում քաղաքի, և Վան ու Թիֆլիս նահնադիներից վորոշ հոգամասեր: Այդ Հայուստանը պատվար պիտի կազմեն Հյուսիսի դեմ, միանալով Անդրկովկասում ստեղծվելիք այլ պետության հետ: Ինչ վերաբերում ե Ղար ին, նա, հայկական լինելով մեկտեղ, Թյուրքիան գինվարական առանձնանատուկ իրավունքներ պիտի ունենա այդ բերքաթագութի մեջ, և այդ ել պարզ այն պատճառով, վոր Հայուստանը լինելով նորաստեղծ ու փոքր պետություն, առայժմ անկարող պիտի լինի այդ կարեռագույն սազմակենտրոնը ըստ արժանիվույն ոգտագործել Ռուսիո դեմ: Պետք ե ստեղծել և վրաստան, Աղբը ջան ու Դաղուստն, և այդպիսով այդ ազգիցը կստանան իրենց անկախությունը...»

... Խնչպես նկատում եք, ավելացնում են Ռուբենը, իթթիհատի և թյուրք կառավարության պաշտոնական լիազարները մեզ առաջարկում եյին ստեղծել Միացյալ Անկախ և Ազատ Հայուստան, այսինքն մի բան՝ վոր վոչ Դաշնակցության ծրագրի, և վոչ ել նրա այդ որերի արամադրության մեջ կար: Ինարկե, այս առաջ ար կն երը գ այ թ ա կ դ ե ց ո ւ ց ի չ պ ի տ ի լ ի ն ե յ ի ն վ ո մ ա ն ց հ ա մ ա ր, և ք ա ն ի վ ո ր ա դ ը յ ո ւ ը ն ե ր մ ա տ ն ա ն ց ե ց ի, ա պ ա պ ի տ ի խ ո ս ս տ ո վ ա ն ե մ, վ ո ը ա յ դ ա զ ը յ ո ւ ը ն ե ր ի մ ե ջ հ ե ս ա ք ը ք ը ք վ ո զ ն ե ր ը պ ի տ ի ա հ ս ն ե ն, վ ո ը գ ա յ թ ա կ զ ը ա կ զ վ ո զ ն ե ր ի ց ե կ ն ե լ յ ե ս ե յ ի ս...»

Բայց... Դաշնակցության ճնշող մեծամասնությունը հակառակ եր գ ա յ թ ա կ զ վ ո զ ն ե ր ի ն :

Կանգ առնենք մի փոքր այդ «պատմության» վրա:

